№ 104 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 15 ՄԱՅԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 15 ՄԱՅԻՍԻ № 104

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ. օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կոպկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարկում՝ 8 Площадь Биржи.

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ծրիարար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՒՔԱԽՏԻ և սրտի։ Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ԲԱԴԻՒ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԵՎՄՕՏՕՐԱԿՈՒՆ։
Հիւանդութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9--1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը։
Զբաղողներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար։
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դանօվսկայայ)։ Հեռախօս 7—92.
(ա.օ.) առ. 92. 100—71

ՑՈՑՍ ԿԱՐԵԼԻ Է ՏԱՏԵԼ

Մեր նախորդ յօդուածների մէջ հայոց հարցի մասին, ի նկատի ունենալով անգլօ-թիւրքական նոր համաձայնութիւնը, մենք յոյժադատօրէն վերաբերվեցինք հայոց հարցի լուծման աջողութեան, գտնելով որ այդ նոր համաձայնութիւնը վերստեղծում է միայն 1878-ի դրութիւնը։

Սակայն վերջին մի քանի նոր տեղեկութիւններ և մանաւանդ անգլիական պարլամենտում տեղի ունեցած հայոց հարցի քննութիւնը և արտաքին գործերի մինիստրի օգնականի տուած բացատրութիւնները, որոնք տպված են «Մշակի» երէկվայ և այսօրվայ համարներում, բաւական հիմք են տալիս կարծելու, որ այս անգամ հայոց հարցը կարող է լուծումն գտնել գլխաւորապէս այն պատճառով, որ այժմ բոլոր մեծ պետութիւնների շահը պահանջում է մտցնել Հայաստանում ըէֆօրմներ։

Քաղաքականութեան և դիպլօմատական աշխարհի մէջ ամենից բարձր է դասվում շահը։ Արդ, այժմ հանգամանքները այնպէս են դասաւորված, որ Եւրօպական մեծ պետութիւնների սեփական շահերը պահանջում են բարեկարգված տեսնել Ասիական Թիւրքիան և, հետևաբար, նաև հայկական նահանգները։ Ուստի և անգլիական արտաքին գործերի մինիստրի օգնականի խօսքերը, թէ անհրաժեշտ է, որ պետութիւնները միահամուռ ցանկութիւն ունենան յարուցանել հայոց հարցը, և պատգամաւոր Օ'Կոնոռի խօսքերը, թէ Գերմանիան ևս շահ ունի, որ ըէֆօրմները մտցվեն, պարզ ցոյց են տալիս, որ այս անգամ հայկական ըէֆօրմների խնդիրը պէտք է դրվի հրապարակի վրա և լուծվի։ Այն հանգամանքը, որ մեծ պետութիւնները համոզվել են, թէ հայերի ձգտումները բնաւ անջատողական չեն, թէ նրանց պահանջները խիստ չափաւոր են և արդարացի, բերում են այն եզրակացութեան, որ շատ մօտիկ ապագայում հայոց հարցը քննութեան կառնվի և կը լուծվի նպաստաւոր կերպով։

Որովհետև մենք հիմքեր ունենք կարծելու, որ հայաբնակ վիլայէթների համար մշակած ըէֆօրմների այն ծրագիրը, որ արժանացել է հաւանութեան անգլիական պարլամենտում, հաւանութիւն է գտնում և ռուսական շրջանների մէջ, ինչպէս և ֆրանսիական շրջանների մէջ. միւս կողմից, որովհետև Գերմանիան ևս տրամադիր է երևում իր շահերի տեսակէտից իւրացնել տալ ըէֆօրմները Հայաստանում, ուստի մեզ թւում է, որ բոլոր մեծ պետութիւնների մէջ ցանկալի միաբանութիւնը՝ հայոց հարցի վերաբերմամբ առանց որևէ դժուարութեան կը կայանայ։

Այդ պատճառներով՝ մեզ թւում է աւելի խելացի և նպատակայարմար, որ ներկայումս հայ ժողովրդի բոլոր ձեռնհաս խաւերը և շրջաններն ամեն ջանք գործ դնեն՝ աջակցելու յիշված ծրագրի իրագործման, որովհետև նա ամենից շատ հաւանութիւն և շանսեր ունի իրագործված լինելու։

Հ. Առաքելեան

ՄԱՅԻՍԻ 1-Ից ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 7 ՐՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակատրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. յուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՇԵՏՏԻԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կոպկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարկում՝ 8 Площадь Биржи.

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ծրիարար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

«Р. Молва»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ հայոց պատրիարքարանը անբաւարար ընդունեց Թիւրքաց կառավարութեան պատասխանը, որ խոստանում է վարչական բարենորոգումներ մտցնել Փոքր-Ասիայում։

Կ. Պոլսից հեռագրում են, որ Բ. Դուռը Հայաստան է ուղարկել գեներալ-տեսուչների պաշտօնով լորդ Մէշնէրին և Պէրզօնին։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏ

(Հայկական հարցի քննութիւն)
(Նիստ 8 մայիսի 1913 թ.)

II

Միստր Աննան Բրայսից յետոյ ամբիօն է բարձրանում միստր Ֆ. Ո. Օ'Կոնոր . . .
. . . . . .

Այս հարցը,—ասում է նա,—զբաղեցրել է բազմաթիւ անձանց ուշադրութիւնը Եւրօպայի բոլոր երկիրներում, վերջին ամիսների ընթացքում։ Ոչ միայն կոմիտէներ կազմվել են երկու հայասէր կոմիտէներ, այլ և կազմվել են Պարիզում, Բերլինում, Ռուսաստանում և, կարծեմ, նաև Շվէյցարիայում և այլ տեղեր։ Շվէյցարիայում խնդրի մասին խորին զգացումն ունեն։ Չը կայ մի երկիր, որ նրանից աւելին գործած լինի՝ թեթևացնելու համար հայերի տառապանքները, ամեն ժամանակ ուղարկելով հիւանդապահներ կամ այլ օգնութիւններ։ Ես յիշում եմ այդ կոմիտէների մասին՝ ցոյց տալու համար, որ Եւրօպայի հասարակական խղճմտանքը արթնացել է և միաձայն է։ Չը նայելով այդ կոմիտէների գոյութեան, մենք լռութիւն պահպանեցինք այս վերջին ամիսների ընթացքում։ Մենք այդ արինք ափսոսանքով, որովհետև մենք համոզված ենք այն անհրաժեշտութեան մէջ, որ հարկադրում է մեծ պետութիւններին ձեռք առնել այդ հայկական խնդիրը, այն վերջնական հաշուեյարդարութեան ժամանակ, որ լինելու է Բալկանների պատերազմից յետոյ։ Մենք պահեցինք լռութիւն, որովհետև մենք կամենում էինք խոյս տալ, ամեն կերպով, թիւրքերը գրգռելուց թէ Եւրօպայում, թէ Ասիայում և առաջ չը բերել որևէ մի ցաւալի դէպք, ինչպէս պատահել է առաջ։ Մեր լռութեան մի այլ պատճառը այն իրողութիւնն է, որ մեծ պետութիւնները կլանված էին այն սոսկալի երկիւղով, թէ մի եւրօպական պատերազմ կարող է գրգռվել այն դէպքերով, որոնք իրար ետևից ծագում են։ Այդ պայմանների մէջ մեզ անարդար էր թւում, անպատեհ և գուցէ վտանգաւոր արծարծել այդ խնդիրը։ Եւ եթէ այժմ արծարծում ենք, որովհետև կարծում ենք, որ Հայաստանի բարեկամների լռութիւնը, եթէ յարատևէր այս պարլամենտի մէջ, վատ կը հասկացվէր և կը մեկնաբանվէր իբրև նշան անհետացման այն կենդանի համակրութեան և հետաքրքրութեան, որոնց մասին պատմական ապացոյցներ է տուել մեր երկիրը Հայաստանին։ Մենք վստահութիւն ունենք կառավարութեան վրա։ Եւ նրա վրա ճնշումն գործ դնելու նպատակով չէ, որ բացել ենք այս վիճաբանութիւնը. այլ վերջապէս, նրա համար է, որ ցոյց տանք Հայաստանի բարեկամներին Եւրօպայում, որ Անգլիայի իրանց բարեկամները համակրում են նրանց և գործում են նրանց համար։ Ես միայն պէտք է շեշտեմ այն բոլոր դիտողութիւնները, որոնցով իմ պատկառելի բարեկամը ներկայացրեց խնդիրը այնքան նշանաւոր պարզութեամբ։ Ես ցանկանում եմ շեշտել հզօրապէս այն իրողութիւնը, որ հայերի ձևակերպած պահանջները նոյնքան շահաւէտ են Թիւրքիային և Թիւրքերին, որքան իրանց հայերին։ Մենք կարծում ենք, որ միայն Փոքր Ասիայում, յատկապէս Հայաստանում, ըէֆօրմներ մտցնելովն է, որ օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը կարող է պահպանվել։ Մենք կարծում ենք նոյնպէս, որ երբ կարգը յաջորդի անիշխանութեան և քաոսին, դրանից կօգտվեն նոյնչափ թիւրքերը, որքան հայերը։ Անհնարին է թիւրքերի համար բարգաւաճել, նոյն իսկ եթէ յարդի չենթարկվեն, քանի դեռ իրանց երկիրը մասնված կը լինի անկարգութեան և քաոսին։ Ուստի ես համոզված եմ, որ նրանք, որոնք պահանջում են այդ ըէֆօրմները գլխաւորապէս հայերի համար, փաստաբանում են նաև այն ըէֆօրմների համար, որոնք հաւասարապէս անհրաժեշտ են և հաւասարապէս օգտակար կը լինեն Փոքր Ասիայի մուսուլման ժողովուրդների համար։ Մենք կարծում ենք, որ արված պահանջները այն տեսակի են, որ մեծ պետութիւնների հաւանութիւնը կարող է արվել, և յոյս ունեմ, որ մեծ պետութիւններից ոչ մինը այնքան անկեղծօրէն չի շնորհի իր յօժարութիւնը, ինչպէս Մեծն Բրիտանիան։ Այժմ յարմար առիթն է յարուցանել խնդիրը, որովհետև այն ֆինանսական օգնութիւնը, որ Թիւրքիան սպասում է ստանալ Եւրօպայից՝ ստանալի կանգնելու համար, չի շնորհվի, կարծում եմ, մինչև որ չը ստանանք օսմանեան կառավարութիւնից երաշխաւորութիւն, որ ջանքը գործ կը դնէ վերականգնել բարեկեցութիւնը նահանգների մէջ։ Ահա ինչ որ ունէի ասելու այժմ։

III

Միստր Ակլէնդ, արտաքին գործոց մինիստրի օգնականը. . . . . .

Հայաստանի վերաբերեալ մի շատ կարևոր հարց յարուցվեց այս պարլամենտի երկու պատկառելի անդամների կողմից, և ես կը կամենայի մի քանի խօսք ասել այդ մասին։ Բոլորովին ճիշդ է, ինչպէս ասաց Լիվերպուլի սկօտական բաժանմունքի պատկառելի ներկայացուցիչը (Օ'Կոնոր), որ էնքը և իր բարեկամները այս պարլամենտում՝ ունեցել են սիրալիութիւն խնայել մեզ, խուսափելով արծարծել դժուարին խնդիրներ այս վերջին ամիսների ընթացքում։ Սակայն՝ թէև այդ խնդիրները չեն յիշատակվել հրապարակական ատենախօսութեան մէջ, այնու ամենայնիւ մենք շատ ենք լսել խօսելը Հայաստանի մասին, նրա բարեկամների, հայասիրական կոմիտէների և մանաւանդ ընկերութիւնների կողմից։ Եւ այն իրողութիւնը, որ այդ խնդիրը հրապարակօրէն չէ քննվել, չը պէտք է մեկնաբանվի այն մտքով, որ նա որևէ կերպով չէ արժանացել իմ պատկառելի պետի (արտաքին գործերի մինիստրի) ուշադրութեան։ Իրօք, կրկին ու կրկին անգամ աղդարարութիւններ են արվել օսմանեան կառավարութեանը այդ խնդրի մասին, մեր շահերի նկատմամբ։ Եւ մենք ստացել ենք, ինչպէս ակնկալում էինք, հաւատիքներ, որ ամեն հնարաւոր բան պէտք է անվի խոյս տալու անտեղի ջարդերի կրկնութիւնից հայաբնակ նահանգներում, երբ զինուորները և գաղթականները Եւրօպայից գալով անցնեն Ասիա։ Մինչև մի որոշ աստիճան մենք ապացոյցներ ունենք, որ այդ հաւաստիքները կատարվել են. մի քանի օր առաջ լուր տարածվեց Եւրօպայի մի քանի լրագիրներում, թէ Ադանայի դրութիւնը վտանգաւոր է։ Մենք ունենք մի հիւպատոս Ադանայում, որ շարունակ մեզ իրազեկ է պահում, և ես բարեբաղդ եմ ասելու, որ մի քանի հարիւր միւսիւլման գաղթականներ և ընտանիքներ, որոնք եկել են Եւրօպայից, Փոքր-Ասիայի այդ մասում աջողութեամբ տեղաւորվել են, և նրանց համար աշխատանք է գտնվել, յաճախ հայ ազգաբնակութեան մէջ։ Դժուարութիւնների մասին տարածված լուրերը չափազանցված են, և հայերը, մինչև այժմ, կատարեալ ապահովութեան մէջ են ու ոչ մի դժուարութիւն չէ ծագել։ Ի հարկէ կարող են առարկել, որ աշխարհս ամենարարի կամքն ունենալով հանդերձ՝ թիւրք կառավարութիւնը կարող է բաւականաչափ ուժեղ չը լինել կարգը պահպանելու նահանգների մէջ։ Այդ ճիշդ է, բայց, ինչ և լինի, ես պէտք է շեշտեմ այն կէտը, որ Լիվերպուլի պատկառելի անդամը (Օ'Կոնոր) ցոյց տուեց, թէ նոյնչափ թիւրքիայի և թիւրքերի օգուտն է, որչափ Հայաստանի և հայերի, որ կարգ պահպանվի և մի լաւ կառավարութիւն հաստատվի ու ամրապնդվի։ Երբ հաշտութիւնը կնքվի—և մենք յոյս ունենք, որ այդ շուտով կը լինի—Թիւրքիան և դաշնակիցները, մեծ պետութիւնները պէտք է բանակցեն Թիւրքիայի հետ, և ես կարող եմ ասել, որ երբ այդ բօլէն դայ, ամեն մի առիթից կօգտվենք, որպէսզի հայկական հարցը քննվի այն տեսակէտով, որով նրան ներկայացրին այստեղ երկու պատկառելի անդամները իրանց ատենաբանութիւնների մէջ։ Սակայն մի բան չը պէտք է աչքաթող անել. այդ այն է, որ ցանկութիւնը՝ տալ Թիւրքիային մի լաւ շանս ամրացնել և զարգացնել իրան մնացած երկիրները՝ բոլոր մեծ պետութիւնների ունեցած ցանկութիւնն է, և, հետևաբար, եթէ մենք յարուցանենք մի որևէ խնդիր, մենք պէտք է հսկենք, ինչպէս միւս պետութիւններն ևս հսկելու են—ոչ կողմից, որպէսզի այդ հարցը յարուցվի բոլոր մեծ պետութիւնների կողմից միահամուռ և որ ոչ մի անջատ քայլ չը կատարվի մեծ պետութիւններից որա կամ նրա կողմից։ Մենք յոյս ունենք նոյնիսկ—և ապահով եմ, որ պատկառելի անդամը համաձայն կը լինի մեզ հետ—որ ինքներս յարուցանենք այդ հարցը, և մենք պատրաստվում ենք յարուցանել և ձեռք բերել նրա քննութիւնը, համեմատաբար միւս մեծ պետութիւնների հետ, որովհետև մենք գիտենք, որ գործելով այդպէս՝ մենք աւելի շատ հաւանականութիւն կունենանք ձեռք բերել մի լաւ հետևանք, քան գործելով անջատօրէն և անհատականօրէն։

ԱՐՇԱՐՈՒՆԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՃԱՌԸ Ա.ԶԳ. ԺՈՂՈՎՈՒՄ

«Մշակի» երէկվայ համարում մենք հաղորդել էինք Թիւրքահայոց ազգային ժողովի ամսոյ 3-ին գումարված նոր նստաշրջանի բացման և Արշարունի պատրիարքի այդ առիթով արտասանած նախագահական ճառի մասին, խոստանալով այդ ճառի ուշագրաւ մասերը առաջ բերել։

Ստորև գտնում ենք պատրիարքի բանախօսութեան այն հատուածները, որոնք վերաբերում են հայկական հարցին, արտատպելով «Բիւզանդիոնից»։

Գալով յարաբերական գործոց, չեմ կարծեր, որ սովորական տեղեկութիւնները պահանջէք ըսել և անով բաւականանալ։ Ես ալ չեմ կրնար ատոր վրայէն անցնիլ առանց քրքրելու մեր խոր վէրքերը, բուժելու և բուժել տալու յոյսերով։

Վարչութեան գործի գլուխ անցած օրէն իսկ, նորէն ըստ առաջնոյն և աւելի թափով շարունակուած են դաւառներէն հասնող գոյժերն և օգնութեան աղաղակները։ Ես և վարչութիւնը չենք թերացած երբէք ամենայն ճշդութեամբ օրը օրին հաղորդելու զանոնք Բ. Դրան և դրման խնդրելու։

Դժբաղդաբար մեր առաջնորդներու տեղեկատուութիւնները վստահութիւն չեն ներշնչած, և կառավարութիւնը՝ հիմնուելով իր պաշտօնեաներուն տեղեկատուութեանց վրայ՝ հերքած է զանոնք։ Իսկ աղաղակող հարըստահարութեանց հանդէպ միշտ խոստացած է։

Վարչութիւնը գործի գլուխ անցած օրէն ի վեր (հոկտ. մայիս) հողային, կրօնափոխական, սպանութեանց, թալանի և զանազան հարստահարութեանց վերաբերեալ 176 թակրիրներ և յիշատակագիր մատուցուած է կառավարութեան, մինչդեռ կրնայ ըսուիլ որ անոնց շատերուն լիակատար կերպով ընթացք տրուած և արդարութիւնը գրեթէ գործադրուած չէ. անպատիժ մնացած կարգ մը հարստահարիչներ և աւազակներ շատ անգամ քաջալերուած՝ դժբաղդաբար անարգել կը շարունակեն իրենց սխրագործութիւնները. սակայն տեղական իշխանութիւնները արդարութիւնը տարբեր կերպով մեկնելով՝ անսովոր վիճակ մը ստեղծուած է, որուն հետևանքով, օրինակի համար, ամբաստանուած հայ անհատի մը յանցանքը կը վերագրուի ամբողջ գիւղերու և թաղերու։ Այսօր լեռներու մէջ հալածական կը թափառին մէկ քանի հայ գիւղերու ընտանիներ, հարիւրաւոր փախստականներ կը պահուըտին ըստ նախորդ դրութեան։

Տեղեկացանք, թէ հողային խնդիրը՝ վարչապէս կարգադրուելու համար հրաման տրուած է, կը սպասենք գործադրութեանը, մինչդեռ վերջին օրերս տեղեկացրուեցաւ մեզ, թէ Զարսանջակի հողային հարցը կարգադրել ուզելուն համար կը հրաժարեցուցուի տեղւոյն կայմակամը, Խիզանի և Վանի մէջ բռնատէրերու սպառնալիքով կը ցրուեն հայ գիւղացիները, գրաւելով անոնց հողերը, Մշոյ մէջ նոյնը և հայհոյանք ամեն կողմէ։ Իսկ Կիլիկիան բարեբաղդ դիպուածով միայն առայժմ ազատեցաւ զարհուրելի ջարդէ մը։

Այս անհանդուրժելի վիճակին հանդէպ ես և վարչութիւնը մեր ամբողջ ոյժով բողոքեցինք, և ի վերջոյ, չկրնալով այլ ևս ստանձնել ծանր պատասխանատուութիւնը, ապրիլ 2-ին պատկ. ժողովրդ մատուցած էր իր հրաժարականը։ Պատկ. ժողովդ զօրացուց վարչութիւնը իր կատարեալ վստահութեան քուէովը և յանձնարարեց անոր յանուն այս գերագոյն ժողովին նոր փորձ մը ևս ընել. ահա այս փորձն ալ տեղի ունեցաւ, որու մասին վարչութեան ատենապետը՝ համաձայն պատկ. ժողովոյդ կամքին՝ բացատրութիւններ պիտի տայ բացառիկ նիստի մը մէջ, և պատկ. երեսփոխանութեանդ կը մնայ այնուհետև ճար մը գտնել։

Տեղեկացանք, որ կառավարութիւնը ծրագրած է կարգ մը բարենորոգումներ և թէ կը պատրաստուի յանձնաժողովներ ճամբայ հանել դէպի հայաբնակ գաւառները։ Չենք գիտեր թէ որքան իրական և արդիւնաւոր կրնան ըլլալ այդ ձեռնարկները, որով հարկադրուած ենք վերապահ ըլլալ անոնց նկատմամբ։

Բացայայտ է, որ մեր պահանջները կը կայանան հայ ժողովրդի կեանքի, ինչքի և պատուի ապահովութեան մէջ, պայմանով որ անոնց իրականացումը արմատական, տևական և որոշ երաշխիքներու վրայ հիմնուած ըլլայ։

Թիւրքիոյ հայ ժողովրդին ներկայ ցաւալի կացութեան վերաբերմամբ պարբերաբար տեղեկութիւններ կը հաղորդուին Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին։

Ազգ. ժողովոյդ ներկայ տարեշրջանի բացման առիթով նուիրական պարտք կը համարինք մեր երախտագիտական զգացումները արտայայտել Ն. Ս. Օծութեան, Թիւրքահայ թշուառ հօտի վիճակին նկատմամբ իր թանկագին հոգածութիւնը խնայած չըլլալուն համար։

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 23 ապրիլ

Հետզհետէ լուր կը հասնի քաղաք, որ տիրահռչակ Ֆալամաղ Ալիի տղան զարկեր է Աւրանի Կիկոյի Ասօյի տղայ Կօլան և սպաններ է։ Այսօր գիւղացիներ էին եկած կառավարութիւն և ազգ. առաջնորդարան, բողոքելու թէ իրենք կը գաղթին Ռուսաստան, որովհետև անհնար է այլևս այս վիճակով ապրիլ։ Եւ կը պահանջէին կամ կոտորել զիրենք և կամ ճամբայ տալ, որ հեռանան այս անբաղդ երկրէն...։ Կօլանի ըսպանումը եղած է օր-ցորեկով և գիւղէն ոչ շատ հեռու արտերու մէջ։

Միևնոյն օր լուր եկաւ, որ Սասնոյ Աղբի գիւղի մէջ քիւրդերն սպաններ են հայ եբիտասարդ մը, որ համարձակեր է ընդդիմանալ իր սովորական ֆախիրութեան տուրքը չը տալու համար։

Միևնոյն օրը երեկոյեան աւելի ցաւալի գուժ մը հասաւ։ Քոսուրի քիւրդերը սպաններ են տեղւոյս կառավարութեան պաշտօնեայ սէր-թախսիլդար Խոսրով էֆ. Ադալպեանը... Բարեբաղդաբար քիչ մը մեղմացաւ հայերուս վիշտն ու թախիծը, երբ յաջորդ առաւօտ Խոսրով էֆ.-ն բերին պատգարակի վրայ դրուած, որուն համար ուրախութեամբ բերնէ-բերան կը փսփսային, որ Խոսրով էֆ.-ի վէրքը թէև ծանր, բայց մահացու չէ։ Միայն կըսուի, թէ հիւանդը շատ արիւն կորսնցնելուն և չափազանց վախնալուն համար՝ ապրելու յոյս չի ներկայացներ։ Գնդակը դիպեր է կռնակէն և դուրս է եկեր ձախ ուսոսկրէն։ Հիւանդը եթէ մահէ ազատի, հրաշք է...։ Խոսրով էֆ. զաղեր էր ազնամի և կարգ մը յեռամեայ տուրքերը դանձելու Քոսուրի քիւրդերէն...։ Ասոնք այն քիւրդերն են, որ անցեալ տարի դարձեալ քանի մը հայ սպաննեցին և Աղջնայ միւդիրը վիրաւորեցին ծանրապէս։ Ասոնք այն քիւրդերն են, որ յատուկ զէնք ու թոշակ կը ստանան կառավարութենէն իբր «Համիդիէ ալայը»։ Օսմ. կառավարութիւնը իր ցանածն է որ կը քաղէ, բայց վայ հայուն, որ մնացեր է երկու սրի միջև։

Մշեցի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» երէկվայ համարում մենք հաղորդել էինք Թիւրքահայոց ազգային ժողովի ամսոյ 3-ին գումարված նոր նստաշրջանի բացման և Արշարունի պատրիարքի այդ առիթով արտասանած նախագահական ճառի մասին, խոստանալով այդ ճառի ուշագրաւ մասերը առաջ բերել։

Ստորև գտնում ենք պատրիարքի բանախօսութեան այն հատուածները, որոնք վերաբերում են հայկական հարցին, արտատպելով «Բիւզանդիոնից»։

Գալով յարաբերական գործոց, չեմ կարծեր, որ սովորական տեղեկութիւնները պահանջէք ըսել և անով բաւականանալ։ Ես ալ չեմ կրնար ատոր վրայէն անցնիլ առանց քրքրելու մեր խոր վէրքերը, բուժելու և բուժել տալու յոյսերով։

Վարչութեան գործի գլուխ անցած օրէն իսկ, նորէն ըստ առաջնոյն և աւելի թափով շարունակուած են դաւառներէն հասնող գոյժերն և օգնութեան աղաղակները։ Ես և վարչութիւնը չենք թերացած երբէք ամենայն ճշդութեամբ օրը օրին հաղորդելու զանոնք Բ. Դրան և դրման խնդրելու։

Դժբաղդաբար մեր առաջնորդներու տեղեկատուութիւնները վստահութիւն չեն ներշնչած, և կառավարութիւնը՝ հիմնուելով իր պաշտօնեաներուն տեղեկատուութեանց վրայ՝ հերքած է զանոնք։ Իսկ աղաղակող հարըստահարութեանց հանդէպ միշտ խոստացած է։

Վարչութիւնը գործի գլուխ անցած օրէն ի վեր (հոկտ. մայիս) հողային, կրօնափոխական, սպանութեանց, թալանի և զանազան հարստահարութեանց վերաբերեալ 176 թակրիրներ և յիշատակագիր մատուցուած է կառավարութեան, մինչդեռ կրնայ ըսուիլ որ անոնց շատերուն լիակատար կերպով ընթացք տրուած և արդարութիւնը գրեթէ գործադրուած չէ. անպատիժ մնացած կարգ մը հարստահարիչներ և աւազակներ շատ անգամ քաջալերուած՝ դժբաղդաբար անարգել կը շարունակեն իրենց սխրագործութիւնները. սակայն տեղական իշխանութիւնները արդարութիւնը տարբեր կերպով մեկնելով՝ անսովոր վիճակ մը ստեղծուած է, որուն հետևանքով, օրինակի համար, ամբաստանուած հայ անհատի մը յանցանքը կը վերագրուի ամբողջ գիւղերու և թաղերու։ Այսօր լեռներու մէջ հալածական կը թափառին մէկ քանի հայ գիւղերու ընտանիներ, հարիւրաւոր փախստականներ կը պահուըտին ըստ նախորդ դրութեան։

Տեղեկացանք, թէ հողային խնդիրը՝ վարչապէս կարգադրուելու համար հրաման տրուած է, կը սպասենք գործադրութեանը, մինչդեռ վերջին օրերս տեղեկացրուեցաւ մեզ, թէ Զարսանջակի հողային հարցը կարգադրել ուզելուն համար կը հրաժարեցուցուի տեղւոյն կայմակամը, Խիզանի և Վանի մէջ բռնատէրերու սպառնալիքով կը ցրուեն հայ գիւղացիները, գրաւելով անոնց հողերը, Մշոյ մէջ նոյնը և հայհոյանք ամեն կողմէ։ Իսկ Կիլիկիան բարեբաղդ դիպուածով միայն առայժմ ազատեցաւ զարհուրելի ջարդէ մը։

Այս անհանդուրժելի վիճակին հանդէպ ես և վարչութիւնը մեր ամբողջ ոյժով բողոքեցինք, և ի վերջոյ, չկրնալով այլ ևս ստանձնել ծանր պատասխանատուութիւնը, ապրիլ 2-ին պատկ. ժողովոյդ մատուցած էր իր հրաժարականը։ Պատկ. ժողովդ զօրացուց վարչութիւնը իր կատարեալ վստահութեան քուէովը և յանձնարարեց անոր յանուն այս գերագոյն ժողովին նոր փորձ մը ևս ընել. ահա այս փորձն ալ տեղի ունեցաւ, որու մասին վարչութեան ատենապետը՝ համաձայն պատկ. ժողովոյդ կամքին՝ բացատրութիւններ պիտի տայ բացառիկ նիստի մը մէջ, և պատկ. երեսփոխանութեանդ կը մնայ այնուհետև ճար մը գտնել։

Տեղեկացանք, որ կառավարութիւնը ծրագրած է կարգ մը բարենորոգումներ և թէ կը պատրաստուի յանձնաժողովներ ճամբայ հանել դէպի հայաբնակ գաւառները։ Չենք գիտեր թէ որքան իրական և արդիւնաւոր կրնան ըլլալ այդ ձեռնարկները, որով հարկադրուած ենք վերապահ ըլլալ անոնց նկատմամբ։

Բացայայտ է, որ մեր պահանջները կը կայանան հայ ժողովրդի կեանքի, ինչքի և պատուի ապահովութեան մէջ, պայմանով որ անոնց իրականացումը արմատական, տևական և որոշ երաշխիքներու վրայ հիմնուած ըլլայ։

Թիւրքիոյ հայ ժողովրդին ներկայ ցաւալի կացութեան վերաբերմամբ պարբերաբար տեղեկութիւններ կը հաղորդուին Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին։

Ազգ. ժողովոյդ ներկայ տարեշրջանի բացման առիթով նուիրական պարտք կը համարինք մեր երախտագիտական զգացումները արտայայտել Ն. Ս. Օծութեան, Թիւրքահայ թշուառ հօտի վիճակին նկատմամբ իր թանկագին հոգածութիւնը խնայած չըլլալուն համար։

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 23 ապրիլ

Հետզհետէ լուր կը հասնի քաղաք, որ տիրահռչակ Ֆալամաղ Ալիի տղան զարկեր է Աւրանի Կիկոյի Ասօյի տղայ Կօլան և սպաններ է։ Այսօր գիւղացիներ էին եկած կառավարութիւն և ազգ. առաջնորդարան, բողոքելու թէ իրենք կը գաղթին Ռուսաստան, որովհետև անհնար է այլևս այս վիճակով ապրիլ։ Եւ կը պահանջէին կամ կոտորել զիրենք և կամ ճամբայ տալ, որ հեռանան այս անբաղդ երկրէն...։ Կօլանի ըսպանումը եղած է օր-ցորեկով և գիւղէն ոչ շատ հեռու արտերու մէջ։

Միևնոյն օր լուր եկաւ, որ Սասնոյ Աղբի գիւղի մէջ քիւրդերն սպաններ են հայ եբիտասարդ մը, որ համարձակեր է ընդդիմանալ իր սովորական ֆախիրութեան տուրքը չը տալու համար։

Միևնոյն օրը երեկոյեան աւելի ցաւալի գուժ մը հասաւ։ Քոսուրի քիւրդերը սպաններ են տեղւոյս կառավարութեան պաշտօնեայ սէր-թախսիլդար Խոսրով էֆ. Ադալպեանը... Բարեբաղդաբար քիչ մը մեղմացաւ հայերուս վիշտն ու թախիծը, երբ յաջորդ առաւօտ Խոսրով էֆ.-ն բերին պատգարակի վրայ դրուած, որուն համար ուրախութեամբ բերնէ-բերան կը փսփսային, որ Խոսրով էֆ.-ի վէրքը թէև ծանր, բայց մահացու չէ։ Միայն կըսուի, թէ հիւանդը շատ արիւն կորսնցնելուն և չափազանց վախնալուն համար՝ ապրելու յոյս չի ներկայացներ։ Գնդակը դիպեր է կռնակէն և դուրս է եկեր ձախ ուսոսկրէն։ Հիւանդը եթէ մահէ ազատի, հրաշք է...։ Խոսրով էֆ. զաղեր էր ազնամի և կարգ մը յեռամեայ տուրքեր

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ

—o—

Կ. ՊՕԼՍԻ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԱԳՐԻ ՄԱՍԻՆ

(Կ. Պոլսի իտալական մեսսիայի օրգան «La Turquie»-ի առաջնորդողը)

—

Վեց ամիս առաջ հետևեալ տողերը կը գրէինք, և թող ներուի մեզ զանոնք արտատպել, քանի որ այժմէութիւն են անոնք.

«Ցաւի, անձկութեան և յուսահատութեան երկար աղաղակ մը կը շարունակէ ժայթքել Հայաստանի լեռներէն ու գաշտերէն։ Այդ աղաղակը արձագանգէ առ արձագանգ կը հասնի մեզի, իբր երկաթ, դժխեմ ու սրտակեղեք հեծկլտուք մը։

«Ասիկա ողբն է ժողովուրդի մը, զոր կը խողխողեն, եղերական և գերագոյն կոչը ազգի մը, որ չի համակերպիր մեռնելու։

«Պիտի լսուի վերջապէս անիկա։ Պիտի հասկնա՞ն անոր ստիպողական անձկութիւնը։ Հանրային իշխանութիւնք վերջապէս պիտի յուզուին տարբեր կերպով մը, քան խօսքերով...

«Կառավարութիւնը անշուշտ ըստ իր խոստումներուն հարկ եղած հրամանները տուաւ տեղական իշխանութեանց։

«Բայց ինչ կարժէն հրամանները, եթէ անոնց գործադրումը չապահովուի։

«Ու արդարև Հայաստանէն մեզ եկած լուրերը ամեն օր կը բերեն ցաւալի շարք մը սպանութիւններու, յափշտակութիւններու և ամեն տեսակ բռնութեանց, որ կը գործուին հայերուն դէմ։

«Պէտք է, որ իրաց այս վիճակը դադրի։ Պէտք է, որ կառավարութիւնը ամենադու միջոցներ ձեռք առնէ զանոնք դադրեցնելու համար։ Պէտք է, որ վերջապէս կասին քիւրդերուն և ամեն տեսակ չարդարներուն չարաշուք շահատակութիւնները. այս գարշելի չարագործութիւնները, որ կը յիշեցնեն համիդեան շրջանը, անանուն ազէտ մը և նախատինք մըն են։

«Հայերը անցեալին մէջ զոհերն եղան ճարտարօրէն արձակուած մոլեռանդութեան մը։ Եւ սակայն անոնք հաւատարիմ հպատակներ էին, և ալ աւելի են այսօր։ Երկիրը չունի օսմ. հայրենիքին յառաջդիմութեան և ազատութեան գաղափարներուն աւելի յարած զաւակներ։ Նոր բէժիմին արշալոյսը անոնց համար եղաւ արիւնալից արշալոյս մը։ Անոնք ամեն բան մոռցան լոկ խորհելու համար, որ իրենց իմացականութիւնը, իրենց հազուագիւտ ընդունակութիւնները և անձնուիրութիւնը դնեն ի սպաս երկրին ծառայութեան։ Ուրեմն ոչ միայն արդարութեան ու մարդասիրութեան պարտականութիւն մըն է, զոր կառավարութիւնը պէտք է կատարէ անոնց հանդէպ, այլ նաև երախտագիտութեան պարտականութիւն մը։ Վարկեր ջուէարկուեցան լուծել ջնջելու համար հողային հրաշակաւոր խնդիրը։ Շատ աղէկ։ Բայց բանակցութիւնը կրնայ ձգձգուիլ և սպանութիւնները կը շարունակուին։

«Կառավարութիւնը ինքզինքին և մարդկութեան կը պարտի իրենց որջերուն մէջ հալածել ջարդարարներն ու կողոպտիչները։ Զօրքեր կան իր տրամադրութեան ներքև, թող զանոնք գործածէ հաստատելու համար կարգ կանոնը և ապահովութիւնը, թշուառութեան ու սուգի այս վայրերը։ Պիտի ըսուի թէ գործը դիւրին չէ։ Մենք դայս շատ աղէկ կը հասկնանք, քանի որ կառավարութիւնը ուրիշ տեղ ամենածանր դժուարութիւններու դիմաց կը գտնուի։»

Այս դժուարութիւնները՝ նոյն նկատողութիւնները գրուած պահուն՝ մեր գուշակածէն աւելի ծանր եղան։ Թող ներուի մեզ որ զանոնք արտատպեցինք, հակառակ անոնց երկարութեանը, որովհետև անոնք ճիշդ կարտայայտեն մեր այսօրուան զգացումները, և հայկական նահանջներուն կացութիւնը նոյնն է, որ էր 1912 թ. սեպտեմբերին։ Թերևս սակայն պէտք է նոր ստուերներ աւելցնել այս պատկերին վրայ։

Պատերազմին աղէտը մեծապէս կը ճնշէ հայերուն վրայ, որովհետև հայերը կատարեցին իրենց ամբողջ պարտականութիւնը հանդէպ օսմ. հայրենիքին, և միւս կողմէ վայրկեանի անստուգութիւններն ու վտանգները աւազակներուն ընծայեցին աւելի ընդարձակ և աւելի ազատ գործունէութեան դաշտ մը։

Հայոց սրբազան պատրիարքը մեզ կըսէր վեց ամիս առաջ. «Վերջին ճիգէ մը եռք, զոր պիտի փորձեմ, ալ ինծի աղօթել ու լալ պիտի մնայ»։

Այս ճիգը փորձեց։

Ցեռոյ պատերազմը ծագեցաւ աւելի անմիջական և աւելի կենսական զրաղումներ պատճառելով։

Այսօր պատրիարքը լսելի կընէ անձկութեան նոր աղաղակ մը, գերագոյն կոչ մը։ Եպարքոսին ուղղած երկար յիշատակագրով մը, անիկա ցաւագին կերպով մը կը պարզէ հայ ազգին թշուառութիւնները, կրած անարդարութիւնները, և ամեն տեսակ յարձակումները, որոնց զոհ կըլլայ։

Ասիկա կարճառօտ հաշուեկշիռ մըն է, սիրտ ճմլող ճշդութեամբ մը։ Ա. Հրատարակուելիք մը չէ, այլ թրթռուն պաշտպանողական մը, որ սրտի պերճախօսութեան կը միացնէ ճիշդ ու անվիճելի դէպքերու պերճախօսութիւնը։

Եպարքոսն այս օրինաւոր գանգատներն ու յուզիչ պահանջումները ընդունեց այնպիսի փութով մը, որ ցոյց կուտայ խորին համակրութիւն հայկական դատին նկատմամբ։ Եպարքոսը խոստացաւ արգարութիւն ընել և իրաւունքին յաղթանակել տալ։

Բայց պէտք է, որ կառավարութիւնը լոկ խօսք չընէ, այլ, դարձեալ կը կրկնենք, պէտք է փութայ գործ տեսնել, ի շահ կայսրութեան։

Շատ աղէկ բան է ուսումնասիրել բարեկարգումներու ծրագիրներ։ Անշուշտ աղէկ զգուշութիւն է հասուն խորհրդածութիւն ընել օտար մասնագէտներու ընտրութեան համար, որ պաշտօն պիտի ունենան կազմակերպելու Վանայ, Բաղէշի նահանգները և այլն. թէև տակիա քիչ մը կը նմանի օրինակին այն կալուածատէրին, որուն տունը կը սկսի այրիլ, և երկարօրէն կը խորհի, թէ որ ապահովագրիչին պէտք է դիմէ։

Կը միանանք մեր պաշտօնակիցներէն մեծագոյն մասին, ըսելու համար կառավարութեան. «Ընէք, ու շուտ ընէք։ Լսեցէք անձկութեան աղաղակն, որ կը բարձրանայ ձեզի։ Անգթօրէն հալածեցէք ջարդարարներն ու թալանչիները։ Ցեռոյ ժամանակ պիտի ունենաք գործադրելու ձեր բարենորոգումները, իբրև ստուն գանգաղութեան մը օրէնքներուն համաձայն»։

(«Բիւզ.»)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՐՁԵԱԼ ԳՐԱԿԱՆ ԲՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

I

Որ հայ հասարակական կեանքի նոր գուներարման հետ հայ գրականութեան մէջ ևս հետզհետէ մուտք է գործում մոդերնիզմը, որպէս գրական նոր հոսանք, այդ բանի դէմ ոչ ոք այլ ևս վէճեր չէ կարող։ Որ միջավայրի հասարակական որոշ արամադրութեան համապատասխանող գրական այդ նոր հոսանքը հրապարակ է հանում և պիտի հանէ նաև հատ ու կենտ թէօրէտիկներ, որոնք գլխաւորապէս պիտի հակընդդէմ լինեն մաքսիստական գրական - քննադատական հոսանքին, այդ ևս պէտք է անխուսափելի համարել։ Այդ տեսակէտից ուշադրութեան արժանի են գեղարուեստական քննադատութեան առիթով արտայայտած այն կարծիքները, որոնք զետեղած էին «Բագուի Ձայն» թերթի 38 և 70 համարներում։

Այդ յօդուածներից մէկը Ց. Խանզադեանի դասախօսութեան հաշուեւուութիւնն է, իսկ միւսը «Գրական թիւրիմացութիւն» վերնագիրն է կրում՝ Գրասէր ստորագրութեամբ։ Երկու յօդուածներն էլ քարոզում են միևնոյն տենդէնցները, երկուսն էլ կրում են միևնոյն ուղղութիւնը։ Դրանք գլխաւորապէս այն մարդերն են, որոնք քաղաքից արտայայտած են եղել ռուս գրականութեան մէջ՝ «մաքուր արուեստի» կամ «գեղարուեստը գեղարուեստի համար» սկզբունքի պաշտպանների կողմից։ Եւ այս վերջին երևոյթը ռուս գրականութեան մէջ իր ամբողջ պատմութիւնը ունի, բայց նախ և առաջ աչքի է ընկնում մի խոշոր հանգամանք. «մաքուր արուեստի» հարցը իր մոլեռանդ պաշտպաններով ամեն անգամ հրապարակ է եկել և այժմ ստացել գլխաւորապէս հասարակական բէակցիոն շրջաններում և թուլացել կամ խաղաս մոռացվել է, երբ հասարակական կեանքը թափոխել է եռուն, ապտնապալից շրջանի մէջ։

Հանմանան շրջաններից հայ իրականութիւնը խուսափել չէ կարող այժմ էլ, քանի որ նրա մէջ գրական որևէ հոսանք անդրադարձումն է ստանում այն ժամանակ, երբ միևնոյնը արդէն իր ճգնաժամը անց է կացրել ռուսական իրականութեան մէջ։

Եթէ, օրինակ, այժմ ռուս գրականութեան մէջ մոդերնիզմի թագաւորութիւնը միանգամայն տեղի է տուել առողջ բէալիզմին, մեզանում նոր միայն մուտք է գործում մոդերնիզմը։ Սիմպտոմները չեն յապաղում։

Դա անշուշտ ունի իր հասարակական պատճառները, բայց թողնենք այդ։

Արդ, Խանզադեանի վերոյիշեալ դասախօսութեան գլխաւոր եզրակացութիւնը եղել է այն, որ գեղարուեստը գեղարուեստի համար սկզբունքը որոշ վերապահումներով ու լրացումներով միակ ճշմարիտ սկզբունքն է գեղարուեստական ստեղծագործութեան մէջ։ Բայց եթէ զուբ հարցնէք՝ ինչու է ճշմարիտ այդ սկզբունքը, պատասխան չէք ստանայ։ Խանզադեանը, ամենաառաջ, կարող է ձեզ ասել, որ գեղարուեստը գեղարուեստի համար է, որովհետև արուեստի մէջ ինչ-որ «կախարդական անհասկանալի զօրութիւն կայ», որովհետև նրա մէջ թաղնված ինչ-որ «անյայտ» կայ և այլն և այլն («Բագուի Ձայն», № 38)։ Անկասկած, այս հարցով հետաքրքրվող ամեն մի անձ կը հասկանայ, որ դա հարցի պատասխանը չէ, այլ նրա մթնացումը, կը հասկանայ, վերջապէս, որ յիշեալ դասախօսութիւնը կարդացողի համար անգամ տակաւին պարզ չէ խնդրի էութիւնը։ Եւ յիրաւի. ինչ է նշանակում անյայտներով, կախարդական զօրութիւններով բացատրել գեղարուեստի էութիւնը։ Զէ որ այդ դէպքում ֆանտազիայի համար չափազանց լայն ասպարէզ է բացվում։ Ինչի է հաւասար այդ «անյայտը». գուցէ նա հաւասար է մի մեծ միաւորի կամ գուցէ հէնց ուղղակի մի զէրօյի։ Գեղարուեստը անյայտներով բացատրողները գիւան է նաև արուեստի աւտօնօմ լինելը։ Այդ «աւտօնօմիան» ոչ մի տարակուսանք չէ պատճառում դասախօս Խանզադեանին։ Բայց եթէ կրկին հարցնէք, թէ ինչու գեղարուեստը աւտօնօմ պիտի համարվի, կը ստանաք «կախարդական զօրութեան» վրա հիմնված մի պատասխան։

Եւ ահա՝ մեկնակէտ ունենալով գեղարուեստի այս երկու «յատկանիշները», կէս-էստետ Խանզադեանն ու նրա հաւատարիմ թարգման Գրասէրը «անյայտներով» պճնված իրանց առարկութիւնները ուղղում են մաքսիսմների դէմ, համարելով վերջինների քննադատական տեսակէտը «ինչ-որ» սօցիօլօգիական և այլն...

Իրըև «մաքուր արուեստի» կողմնակից, Խանզադեանի տեսակէտից գեղարուեստը գեղարուեստի համար սկզբունքը միանգամայն ընդունելի է, բայց որոշ վերապահումներով ու լրացումներով։ Բայց ինչ են ասում այդ զգուշաւոր խօսքերը. էապէս ոչինչ. նրանք գուցէ մի վայրկեան մեղմեն գլխաւոր ձևակերպութիւնը, բայց փոխել նրա էութիւնը չեն կարող։ Մնում է գեղարուեստը գեղարուեստի համար սկզբունքը իր ամբողջ էութեամբ։ Ենթադրենք սա կայն, որ այդ սկզբունքը միակ ճշմարիտն է. արդեօք ինչ մաքի պիտի յանգենք, եթէ մի վոքր աւելի շրջահայեաց լինենք և տրամաբանէն շարունակենք մեր դատողութիւնը։ Հարցնենք՝ ո՞րն է գեղարուեստական երկը։ Մեզ կը պատասխանեն. այն, որը իր մէջ մի կախարդական զօրութիւն և մի անյայտ ունի։ Նորից հարցնենք՝ ո՞վ կարող է լինել այդպիսի երկի հեղինակը։ Տաղանդաւոր մարդը։ Ուրեմն գեղարուեստական երկի հանդէս գալու պատճառը հեղինակի տաղանդն է։ Ապա ուրեմն գեղարուեստական առեղծուածը հէնց այդ տաղանդն է։ Իսկ տաղանդը կարելի է ընորոշել գրողի պսիխօ-ֆիզիօլօգիայով։ Ուրեմն ինչ. գեղարուեստական երկի քննադատութեան համար չը լինի թէ միակ ճշմարիտ տեսակէտը պսիխօ-ֆիզիօլօգիականն է։

Կատարեալ անհեթեթութիւն։ Սակայն թւում է, թէ այս բանը չեն նկատում մեր զգուշաւոր էստետները և մեկնակէտ ունենալով իրանց սխալ, իրապէս ոչինչ չասող տեսակէտը՝ վերջ ի վերջոյ հանում են արտուրդիր։

Ապա՝ եթէ արուեստի շրջանում միակ ճշմարիտ սկզբունքը գեղարուեստը գեղարուեստի համար սկզբունքն է, ինչու, օրինակ, գիտական աշխարհում «գիտութիւնը գիտութեան համար» լինել չէ կարող։ Մի՞թէ անմահ են (պայմանական մտքով) լինում միայն գեղարուեստական ստեղծագործութիւնները և մեռնում են գիտական հանճարեղ տրակտատները։ Բայց, ըստ երևոյթին, «գիտութիւնը գիտութեան համար» սկզբունքը նոյնպիսի մի արուբդ է, որպիսին և «գեղարուեստը գեղարուեստի համարը»։ Պակաս անհեթեթութիւն չէր լինի նոյնը կրկնել նաև պատմութեան նկատմամբ, եթէ մի հանճարեղ պատմաբան հանդէս բերէր իր գիտական աշխատասիրութիւնը գեղարուեստական մի հրաշալի ամփոփումով։

Եթէ «մաքուր արուեստի» կողմնակիցները ձեռ ու ոտն են երկրպագում, նրանք բուալօյական լսողութեամբ են օժտված լինում. իսկ եթէ այդ ձեռ ու ոտի մէջ կախարդական զօրութիւն տեղաւորում, ապա այն ժամանակ նրանք ճգնում են դառնալ ուալզական էստետներ... Եւ երբ այդպիսիները գեղարուեստին տալիս են աւտօնօմիա, իրանք նրա սահմանափակ հանդիսատեսներն են դառնում։ Կեանքի և միջավայրի վրա նրանք չեն նայում իրական յարաբերութիւնների լայն տեսակէտից, այլ միայն իրանց սահմանափակ ֆանտազիայի շրջանակից։ Ուստի և հասկանալի է, թէ ինչու գրական ստեղծագործութիւնների մէջ գեղարուեստական պատկերացումը, այսինքն ձևը նրանց համար միջոց չէ, այլ նպատակ։ Իսկ եթէ աւտօնօմ գեղարուեստագէտների տեսակէտից պատկերացումը միջոց չէ, այլ նպատակ, ապա ուրեմն ոչ «աւտօնօմ» մարդկութեան ձգտումներն ու տենչերը, ընդհանրապէս, նրանց համար նպատակ չէ, այլ միջոց... Այդ է պատճառը, որ մոդերնիստների կարծիքով գեղարուեստագէտը ոչ թէ մարդկային կեանքն է պատկերացնում, այլ նա մի նոր կեանք է ստեղծագործում, և այդ է պատճառը, որ չը նայելով «աւտօնօմ» գեղարուեստի մէջ գեղարուեստագէտը միմիայն կեանքից է տառապում, այնու ամենայնիւ նա իրան տիեզերքի կենտրոնումն է զգում...

Եթէ աւտօնօմ է գեղարուեստը, եթէ գեղարուեստը գեղարուեստի համար է, ապա ուրեմն գեղարուեստական ստեղծագործութիւններին հասարակական յարաբերութիւնների տեսակէտից մօտենալը թիւրիմացութիւն պիտի համարել։ Այդ դէպքում արուեստը սոսկ էստետների սեփականութիւն պէտք է հռչակվի։ Կը նշանակէ և ստեղծագործող հեղինակը անձեռնմխելի պիտի մնայ։ Այստեղ հարկաւ մոռացվում է, որ այսօրինակ տրամաբանութիւնը քննադատութեան ոչնչացման գաղափարին կարող է յանգել. մոռացվում է, որ ձևն ու ոճը թագաւորող պիտի դառնայ, նպատակ պիտի համարվի, իսկ կեանքը և կեանքի նպատակը հասարակ միջոց. մոռացվում է, վերջապէս, որ աւտօնօմ գեղարուեստի անկախ սպասաւորը գեղեցիկ ձևերի մէջ կարող է և խափանիկ դատարկութիւններ տեղաւորել։

Գեղարուեստի աւտօնօմ լինելու սկզբունքը, անշուշտ, մոլորեցրել է Խանզադեանին որոշ չափով։ Նրան թւում է, թէ հայ հեղինակների էստետիկական տեսակէտից փոքր ի շատ բաւարար երկեր չը տալու պատճառներից մէկը կարող է այս կամ այն ձևի քննադատութիւնը լինել։ Սակայն թէ ինչ կը նշանակէ այսպիսի հարցերում հասարակական որոշ տեսակէտ չունենալ։ Ինչու մոռանալ ամենից առաջ այն պարզ ճշմարտութիւնը, որ որոշ շրջանների քննադատները պսիխօ-ֆիզիօլօգիականն է։

Կատարեալ անհեթեթութիւն։ Սակայն թւում է, թէ այս բանը չեն նկատում մեր զգուշաւոր էստետները և մեկնակէտ ունենալով իրանց սխալ, իրապէս ոչինչ չասող տեսակէտը՝ վերջ ի վերջոյ հանում են արտուրդիր։

Ապա՝ եթէ արուեստի շրջանում միակ ճշմարիտ սկզբունքը գեղարուեստը գեղարուեստի համար սկզբունքն է, ինչու, օրինակ, գիտական աշխարհում «գիտութիւնը գիտութեան համար» լինել չէ կարող։ Մի՞թէ անմահ են (պայմանական մտքով) լինում միայն գեղարուեստական ստեղծագործութիւնները և մեռնում են գիտական հանճարեղ տրակտատները։ Բայց, ըստ երևոյթին, «գիտութիւնը գիտութեան համար» սկզբունքը նոյնպիսի մի արուբդ է, որպիսին և «գեղարուեստը գեղարուեստի համարը»։ Պակաս անհեթեթութիւն չէր լինի նոյնը կրկնել նաև պատմութեան նկատմամբ, եթէ մի հանճարեղ պատմաբան հանդէս բերէր իր գիտական աշխատասիրութիւնը գեղարուեստական մի հրաշալի ամփոփումով։

Եթէ «մաքուր արուեստի» կողմնակիցները ձեռ ու ոտն են երկրպագում, նրանք բուալօյական լսողութեամբ են օժտված լինում. իսկ եթէ այդ ձեռ ու ոտի մէջ կախարդական զօրութիւն տեղաւորում, ապա այն ժամանակ նրանք ճգնում են դառնալ ուալզական էստետներ... Եւ երբ այդպիսիները գեղարուեստին տալիս են աւտօնօմիա, իրանք նրա սահմանափակ հանդիսատեսներն են դառնում։ Կեանքի և միջավայրի վրա նրանք չեն նայում իրական յարաբերութիւնների լայն տեսակէտից, այլ միայն իրանց սահմանափակ ֆանտազիայի շրջանակից։ Ուստի և հասկանալի է, թէ ինչու գրական ստեղծագործութիւնների մէջ գեղարուեստական պատկերացումը, այսինքն ձևը նրանց համար միջոց չէ, այլ նպատակ։ Իսկ եթէ աւտօնօմ գեղարուեստագէտների տեսակէտից պատկերացումը միջոց չէ, այլ նպատակ, ապա ուրեմն ոչ «աւտօնօմ» մարդկութեան ձգտումներն ու տենչերը, ընդհանրապէս, նրանց համար նպատակ չէ, այլ միջոց... Այդ է պատճառը, որ մոդերնիստների կարծիքով գեղարուեստագէտը ոչ թէ մարդկային կեանքն է պատկերացնում, այլ նա մի նոր կեանք է ստեղծագործում, և այդ է պատճառը, որ չը նայելով «աւտօնօմ» գեղարուեստի մէջ գեղարուեստագէտը միմիայն կեանքից է տառապում, այնու ամենայնիւ նա իրան տիեզերքի կենտրոնումն է զգում...

Եթէ աւտօնօմ է գեղարուեստը, եթէ գեղարուեստը գեղարուեստի համար է, ապա ուրեմն գեղարուեստական ստեղծագործութիւնների հասարակական յարաբերութիւնների տեսակէտից մօտենալը թիւրիմացութիւն պիտի համարել։ Այդ դէպքում արուեստը սոսկ էստետների սեփականութիւն պէտք է հռչակվի։ Կը նշանակէ և ստեղծագործող հեղինակը անձեռնմխելի պիտի մնայ։ Այստեղ հարկաւ մոռացվում է, որ այսօրինակ տրամաբանութիւնը քննադատութեան ոչնչացման գաղափարին կարող է յանգել. մոռացվում է, որ ձևն ու ոճը թագաւորող պիտի դառնայ, նպատակ պիտի համարվի, իսկ կեանքը և կեանքի նպատակը հասարակ միջոց. մոռացվում է, վերջապէս, որ աւտօնօմ գեղարուեստի անկախ սպասաւորը գեղեցիկ ձևերի մէջ կարող է և խափանիկ դատարկութիւններ տեղաւորել։

Գեղարուեստի աւտօնօմ լինելու սկզբունքը, անշուշտ, մոլորեցրել է Խանզադեանին որոշ չափով։ Նրան թւում է, թէ հայ հեղինակների էստետիկական տեսակէտից փոքր ի շատ բաւարար երկեր չը տալու պատճառներից մէկը կարող է այս կամ այն ձևի քննադատութիւնը լինել։ Սակայն թէ ինչ կը նշանակէ այսպիսի հարցերում հասարակական որոշ տեսակէտ չունենալ։ Ինչու մոռանալ ամենից առաջ այն պարզ ճշմարտութիւնը, որ որոշ շրջանների քննադատները

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՒ ՕՍՄ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

—

Թիւրքերէն մը աղաւաղիր

Թիւրքերէն «Ազբ.» թերթին—որ հիմա «Ալէմդարի» (ընդդիմադիր) տեղ կը հրատարակուի—մայիս 6 թիւի մէջ երկու սիւնակի վրայ և խոշոր տառերով հետևեալ տողերը կը կարդանք.

«Պոլսոյ Նուպար-փաշայի նախագահութեան տակ Պարիզի մէջ գումարուող և արևելեան նահանգներու խնդրով զբաղելիք իրեն կէս նպատակի ունեցող կօմիսէն Էշմիածնայ Սրբազան Կաթողիկոսին դիմում ըրած և արտօնութիւն խնդրած է մնայուն հանգամանք մը ստանալ և հետազնդումներ կատարել. այսինքն հայ ազգին անունով իրեն պաշտօնական հանգամանք մը տրուիլ ուզած է։ Սրբազան Կաթողիկոսը իր սովորական խոհեմութեամբ և չափաւորութեամբ տակաւին տուած չէ այս արտօնութիւնը։ Օսմ. կառավարութիւնը արևելեան նահանգներու պէտքերուն տեղեակ և այդ պէտքերուն գոհացում տալու փափաքող է, և տարակոյս չկայ, որ պատերազմին տագնապներուն վերջանալէն ետք վճռական և լուրջ ձեռնարկներ պիտի ընէ։ Ուստի կը խնդրենք օսմ. կառավարութենէն, որ շնորհ ընէ Սրբազան Կաթողիկոսին աղաչել իր այս խոհեմութեան և չափաւորութեան մէջ շարունակելու համար և յարմար միջոցներով Սրբազան Կաթողիկոսին մօտ պաշտօնական կամ անպաշտօն դիմումներ ընէ»։

(«Մանզ. Էֆք.»)

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

13 մայիսի

Սալոնիկ.—Թշնամական գործողութիւնները յոյների և բոլգարների միջև Պէէջանում դադարեցին հինգշաբթի գիշերը։ Ուրբաթ տեղի ունեցաւ միայն անկանոն ընդհարում մնացած յունաց զօրամասի հետ։

«Ավէրով» յածանաւը գտնվում է Կավալայի ջրերում։

—

Բէլգրադ.—Պաշիչը հրաւիրեց կուսակցութիւնների լիդէրներին ծանօթանալու համար ներկայ դրութեան հետ, մասնաւորապէս սերբ-բոլգարական յարաբերութիւնների հարցի և այն ձեռնարկութիւնների հետ, որ կառավարութիւնը մտադիր է գործադրել Սերբիայի և բալկանեան դաշնակցութեան շահերը պաշտպանելու համար։ Պաշիչը այս օրերս ճառ կարտասանէ սկուպշչինայում սերբ-բոլգարական յարաբերութիւնների մասին։

Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, որոնք տակաւին չեն հերքվել, կառավարութիւնը պատրաստվում է նուաճված երկիրները գրաւման ենթարկել։

«Սամօուպրավան» Անգիսսայի մօտերը տեղի ունեցած յոյն-բոլգարական ընդհարման առիթով ասում է, որ մինչև դաշնակիցների միջև սկսված արիւնհեղութիւնը, նա խորհուրդ էր տալիս նրանց եռանդուն միջոցներ ձեռք առնել՝ հարթելու այն թիւրիմացութիւնը, որ հեշտութեամբ կարող է ոչնչացնել պատերազմի փայլուն աջողութիւնները։

Պաշիչը կուսակցութիւնների լիդէրների հետ խորհրդակցելուց յետոյ յայտնեց, որ նա հինգշաբթի օրը սկուպշչինայում կը պատասխանէ Սերբիայի արտաքին քաղաքականութեան մասին երիտասարդ արմատականների և նացիոնալիստների ուղղած հարցապնդմանը։

«Պոլիտիկա» լրագիրը իրազեկ եղաւ, որ կառավարութիւնը գտնում է, թէ սերբ-բոլգարական պայմանագիրը իր ոյժը արդէն կորցրել է, որովհետև Բոլգարիան չը կատարեց նրա հիմնական կէտերը. այդ իսկ պատճառով ներկայումս անհրաժեշտ է, հիմնվելով իրերի իրական դրութեան վրա, պայմանաւորվել նուաճված երկիրները բաժանելու մասին առանց որևէ դատարանի։

—

Սոֆիա.—Բոլգարական Հեռ. Գործակալութիւնը հերքում է այն տեղեկութիւնները, թէ իբր բոլգարական մի զօրամաս ապատամբվեց, պահանջելով արձակել իրան. սխալ են նաև այն տեղեկութիւնները, թէ երկու զինուոր և մի ունտեր-օֆիցեր կալանաւորվեցին այն բոպէին, երբ պատրաստվում էին կորել Սալոնիկ-Լանգազա հեռագրաթելը։

—

Հռոմ.—Բիսալատին «Մեսաջերօ» լրագրում հարցնելով թէ յոգուտ Իտալիայի՞ է, արդեօք, Յունաստանին դարձնել հակառակորդ յանուն նրա, որպէսզի Ալբանիային մնայ հարաւային մասը, պատասխանում է՝ թէ դա աւելի շուտ Աւստրիային է շահաւէտ, որ նախագծում է այժմ մեզ վանել Յունաստանից։ «Մենք չենք ունենալու բարեկամներ և զրկված ենք լինելու մեր իսկ միջերկրական քաղաքականութիւնը մեր ուզածին պէս վարելու հնարաւորութիւնից, գտնվելով եռապետեան դաշնակցութեան շղթաներում։ Ալբանիան կը դառնայ իտալական-աւստրիական ֆէօդալ, որպէսզի ապա վերածվի աւստրիականի։ Մի՞թէ մենք ենք, որ գործադրելու ենք աւստրիական այդ ծրագիրը»։

—

(Լրագիրներից)

Մայիսի 13-ին Բ. Դուռը հաշտութիւն ստորագրեց բալկանեան տէրութիւնների հետ։ Միայն Բ. Դուռը բողոքեց մեծ պետութիւններին Եգէյեան կղզիները Յունաստանին տալու առիթով։

—

Բալկանեան պատերազմը Ռուսաց Կարմիր Խաչի Ընկերութեանը նստեց մօտ մէկ միլիոն ռուբլի։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

13 մայիսի

Պետերբուրգ.— Առաւօտեան ժամը 9-ին Թագաւոր Կայսրը աջողութեամբ վերադարձաւ՝ Բերլին կատարած ճանապարհորդութիւնից՝ Ցարսկոյէ-Սէլօ։ Կայարանում Նորին Մեծութեանը դիմաւորեցին պաշտօնական անձինք։

Երեկոյեան ժամը 7 ու 30 ր. Մայր Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնան Մեծ Իշխանուհիների և Իշխանների ուղեկցութեամբ մեկնեց Ցարսկոյէ-Սէլօ։

—

Պետերբուրգ.— Թագաւոր Կայսրին Ցարսկոյէ-Սէլօյում բաղդ ունեցան ներկայանալու ֆրանսիական ծովային շտաբի պետ փոխ-ծովակալ Լէբրիսը և նրան ուղեկցող օֆիցէրները և «Ժան-դ'Արկ» յածանաւի հրամանատարը։ Ներկայացնում էր ֆրանսիական դեսպան Դէլկասէն։

—

Պարիզ.—«Տանը» գոհունակութեամբ ընդգծում է Պետերբուրգում ծովակալ Լէբրիսին ցոյց տրված ընդունելութիւնը և մատնանշում է ռուսական և ֆրանսիական ծովային շրջանների մտքերի փոխանակութեան կարևորութիւնը վերջին քաղաքական դէպքերի առիթով։

—

Բերլին.—Անգլիական թագաւորական զոյգը ունկնդրութեան ընդունեց Բերլինի աւագ քաղաքապետին։ Թագաւորը խնդրեց Վէրմուտին շնորհակալութիւն յայտնել ազգաբնակութեանը սրտագին ընդունելութեան համար և նուիրել յօգուտ Բերլինի աղքատների 10,000 մարկ։

Թագաւորական զոյգը Անգլիա է մեկնում վաղը։

—

Կ. Պոլիս.—Ֆրանսիական դեսպանատունը դիմեց Բ. Դրան պաշտօնական պահանջով՝ վճարել «Սենէգալ» շոգենաւի ու նրա ապրանքի արժէքը։

Ամերիկական դեսպանը նոյնպէս առաջադրութիւն արեց «Նէվադայի» առիթով, յայտնելով որ իրան իրաւունք է վերապահում պահանջել նաւի արժէքը Զմիւռնիայի. ամերիկական հիւպատոսից տեղեկութիւն ստանալուց յետոյ։

—

Կ. Պոլիս.—«Վաղիֆէ» լրագիրը տեղեկացնում է, որ արաբների պատգամաւորութիւնը Մեկկայից մեկնել է Եգիպտոս՝ եգիպտական և արաբական կոմիտէների հետ Արաբիայում ինքնավարութիւն հաստատելու մասին խորհրդակցելու համար։ Լրագիրը համակարծիք է ֆոն-դեր-Գոլց փաշային՝ թէ Թիւրքիայի մայրաքաղաքը պէտք է լինի Փոքր-Ասիայի կենտրոնում։

Ռուսաց դեսպանը դեսպանատան առաջին թարգմանին ուղարկեց արտաքին գործերի մինիստրութիւնը՝ դարձնելու Բ. Դրան ուշադրութիւնը այն վտանգի վրա, որ սպառնում են ականները, և պահանջելու մանրազննին ստուգութիւն այդ ականների գիրքերի նկատմամբ, ինչպէս և նախազգուշացնելու, որ ռուսական շոգենաւերի

մը պսիխօ-ֆիզիօլօգիականն է։

Կատարեալ անհեթեթութիւն։ Սակայն թւում է, թէ այս բանը չեն նկատում մեր զգուշաւոր էստետները և մեկնակէտ ունենալով իրանց սխալ, իրապէս ոչինչ չասող տեսակէտը՝ վերջ ի վերջոյ հանում են արտուրդիր։

Ապա՝ եթէ արուեստի շրջանում միակ ճշմարիտ սկզբունքը գեղարուեստը գեղարուեստի համար սկզբունքն է, ինչու, օրինակ, գիտական աշխարհում «գիտութիւնը գիտութեան համար» լինել չէ կարող։ Մի՞թէ անմահ են (պայմանական մտքով) լինում միայն գեղարուեստական ստեղծագործութիւնները և մեռնում են գիտական հանճարեղ տրակտատները։ Բայց, ըստ երևոյթին, «գիտութիւնը գիտութեան համար» սկզբունքը նոյնպիսի մի արուբդ է, որպիսին և «գեղարուեստը գեղարուեստի համարը»։ Պակաս անհեթեթութիւն չէր լինի նոյնը կրկնել նաև պատմութեան նկատմամբ, եթէ մի հանճարեղ պատմաբան հանդէս բերէր իր գիտական աշխատասիրութիւնը գեղարուեստական մի հրաշալի ամփոփումով։

Եթէ «մաքուր արուեստի» կողմնակիցները ձեռ ու ոտն են երկրպագում, նրանք բուալօյական լսողութեամբ են օժտված լինում. իսկ եթէ այդ ձեռ ու ոտի մէջ կախարդական զօրութիւն տեղաւորում, ապա այն ժամանակ նրանք ճգնում են դառնալ ուալզական էստետներ... Եւ երբ այդպիսիները գեղարուեստին տալիս են աւտօնօմիա, իրանք նրա սահմանափակ հանդիսատեսներն են դառնում։ Կեանքի և միջավայրի վրա նրանք չեն նայում իրական յարաբերութիւնների լայն տեսակէտից, այլ միայն իրանց սահմանափակ ֆանտազիայի շրջանակից։ Ուստի և հասկանալի է, թէ ինչու գրական ստեղծագործութիւնների մէջ գեղարուեստական պատկերացումը, այսինքն ձևը նրանց համար միջոց չէ, այլ նպատակ։ Իսկ եթէ աւտօնօմ գեղարուեստագէտների տեսակէտից պատկերացումը միջոց չէ, այլ նպատակ, ապա ուրեմն ոչ «աւտօնօմ» մարդկութեան ձգտումներն ու տենչերը, ընդհանրապէս, նրանց համար նպատակ չէ, այլ միջոց... Այդ է պատճառը, որ մոդերնիստների կարծիքով գեղարուեստագէտը ոչ թէ մարդկային կեանքն է պատկերացնում, այլ նա մի նոր կեանք է ստեղծագործում, և այդ է պատճառը, որ չը նայելով «աւտօնօմ» գեղարուեստի մէջ գեղարուեստագէտը միմիայն կեանքից է տառապում, այնու ամենայնիւ նա իրան տիեզերք

հետ դժբաղդութիւն պատահելու դէպքում օսմանեան կառավարութիւնը վճարելու է վնասները։

—

Պարիզ.—Աշխատանքի կոնֆեդերացիայի և մի քանի սինդիկատների շինութիւններում և աշխատանքի բօրսայում կատարված խուզարկութիւնները երևան հանեցին հակամիլիտարիստական բրօշիւրներ, զինուորականների նամակներ ու թռուցիկներ, որոնցով կոչ է ուղղվում զինուորականներին չը հնազանդվել իշխանութիւններին։ Բացի դրանից մօտ 30 խուզարկութիւններ կատարվեց Պարիզում և շրջակայքում զինուորական շարժումը ղեկավարողների մօտ և 80 խուզարկութիւն գաւառում։ Մարսէյլում գտնվել են մեծ քանակութեամբ գաղտնի փաստաթղթեր։ Ձերբակալութիւններ առ այժմ չը կան։

Դատախազական քննութիւնը պարզեց, որ մի քանի յեղափոխական կազմակերպութիւններ մասնակից են զօրանոցներում տեղի ունեցած միջադէպերին։

1913 թ. բիւջէի դեֆիցիտը ծածկելու համար ֆինանսների մինիստրը առաջարկում է աւելացնել հարկերից մի քանիսը ու նոր հարկեր մտցնել 200 միլիոն ֆրանկ գումարի։

—

Վիեննա.—Զեմլինից հաղորդում են, որ կլօֆաչին ձերբակալել է սահմանադրական ոստիկանութիւնը, արգելելով նրան անցնել սերբական սահմանը։

—

Բուխարէստ.—Կարգի կազմակերպած առաջին ժողովում ներկայ 80 պահպանողականներից երկրորդ ժողովին եկան միայն 15 հոգի։ Մինիստրները բացակայ էին։ Կարգը յայտնեց, որ տեսնելով իրան միայնակ, հրաժարվում է քաղաքական գործունէութիւնից, և պահպանողականների ակումբի նախագահին ուղարկեց յայտարարութիւն կուսակցութիւնից դուրս գալու մասին։

—

Տոկիօ.—Այս տարի Եապօնիայում ծախսվելու է 280 միլիոն իէն երկաթուղիներ կառուցանելու համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ց. ԲԵԴԵԼԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Երկուշաբթի, երեկոյեան ժամը 8½-ին, Հայոց Ազգագրական Ընկ. դահլիճում, Նոր-Նախիջևանից եկած Ց. Բեդելեանը, որ նոր է վերադարձել Հնդկաստան կատարած իր ճանապարհորդութիւնից, մի բանաւոր զեկուցումն արեց հաւաքված բազմաթիւ հասարակութեան իր ճանապարհորդութեան նպատակի և ստանձնած միսսիայի իրագործման մասին։

Ինչպէս յայտնի է, Ց. Բեդելեանը Նոր-Նախիջևանի Հայոց Աղքատախնամ Ընկ. կողմից ուղարկվել էր Կալկաթա, որպէսզի այնտեղ անգլիական դատարանների առաջ պաշտպանէ յիշեալ Ընկերութեան իրաւունքը՝ հանդուցեալ Մասեհ Բաբաջանի կտակով թողած ժառանգութեան վրա։ Այդ կտակի խնդիրը յայտնի է հայ հասարակութեան։

Մասեհ Բաբաջանը 1794 թ. կտակել է Կալկաթայում ունեցած իր 3 տները Նոր-Նախիջևանի հայերին, որոնք միայն 1861 թ. կարողացել են ուղարկել Կալկաթա Միքայէլ Նալբանդեանին՝ ժառանգութիւնը ստանալու համար։ Մ. Նալբանդեան, երկար նեղութիւններից յետոյ, կարողացել է ստանալ յօգուտ Նոր-Նախիջևանի հայերի 60,000 ր. գումար, որ գոյացած է եղել 3 կտակած տների 2-ի վաճառումից և բարդված տոկոսիքից, իսկ երրորդ տունը, որ պէտք է մնայ անպատառ, պէտք է շահագործվի և արդիւնքը բաժանվի Նոր-Նախիջևանի հայերի և Կալկաթայի հայ աղքատների միջև։ Ժամանակի ընթացքում Նոր-Նախիջևան քաղաքը իր ստացած գումարը և բոլոր իրաւունքները՝ ստանալու երրորդ տան արդիւնքի կէսը՝ փոխադրել է Աղքատախնամ Ընկերութեան, սակայն, որովհետև անգլիական դատարանը մի անգամ Մ. Բաբաջանի ժառանգ ճանաչել է Նոր-Նախիջևան քաղաքը յանձին այս քաղաքագլխի, ուստի Ց. Բեդելեան աշխատել է փոխել տալ այդ որոշումը և իրաւատէր ճանաչել տալ Աղքատախնամ Ընկերութիւնը. և նա կարողացել է տեղական հայերի և մի հնդիկ փաստաբանի օգնութեամբ իրագործել այդ ծրագիրը։

Իր զեկուցման մէջ, հաղորդելով այդ ամենը, Ց. Բեդելեան բաւական շահեկան տեղեկութիւններ հաղորդեց և Մ. Նալբանդեանի գործունէութեան ու թողած հետքերի մասին Կալկաթայում։ Նա հաղորդեց և հետաքրքրական տեղեկութիւններ Հնդկաստանի հայերի մասին, որոնց վիճակած է անհետացումն ազգային տեսակէտից։ Հայերը արդէն սկսել են մոռանալ իրանց լեզուն, իրանց գաւակներին կրթում են անգլիական դպրոցներում, և շատ հեռու չէ այն օրը, երբ նրանք բոլորովին կը ձուլվեն անգլիացիների հետ։

Հայերի թիւը ամբողջ Հնդկաստանում 6000-ից աւելի է։

Դասախօսը տեղեկութիւններ հաղորդեց և Կալկաթայի Հայկեան Մարդասիրական ճեմարանի մասին, ինչպէս և այն ցաւալի երևոյթութեան մասին, որ բաժանել է այդտեղի հայերին երկու կուսակցութիւններ։ Երկու ծերունիներ՝ Ցարութիւն Աբգար և Թովմաս Մելքոն, որոնք Մ. Նալբանդեանի հետ ապրել են Կալկաթայում և բարեկամական կապեր են ունեցել, հաղորդել են հետաքրքրական տեղեկութիւններ նրա մասին։

Զեկուցումը թողեց համակրելի տպաւորութիւն, և ունկնդիրները բուռն ծափահարութիւններով շնորհակալութիւն յայտնեցին դասախօսին։ Հ. Ա.

—

Ազգագրական Ընկերութեան մէջ անցեալ շաբաթ տեղի ունեցած Ե. Ֆրանգեանի դասախօսութեան մասին մեր հաշուին, տեղի սղութեան պատճառով, կը մնայ վաղը։

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Առաջին ժողովը նշանակված էր ապրիլի 28-ին։

Տեղի չունեցաւ, որովհետև եկել էին ոչ աւելի քան 5 հոգի՝ նախագահը, քարտուղարը, վարչութեան անդամ բժ. Մխիթարեանը, մէկը խմբագրական անդամներից և մէկը ընդհանուր ժողովի անդամներից։

Երկրորդ ժողովում անդամների թիւը հասաւ 34-ի և ժողովը, իբրև օրինական, կայացաւ Տ. Յովհաննիսեանի նախագահութեամբ։

Հաստատելով նախորդ ընդհանուր ժողովի արձանագրութեան մէջ մտած մի երկու սխալներ, ժողովը անցաւ օրակարգի խնդիրներին։

Նախ՝ կարդացվեց վերատուղիչ յանձնաժողովի զեկուցումը։

Յանձնաժողովի արած իւրաքանչիւր նշանակութեան առիթով վարչութիւնը կէտ առ կէտ տալիս է իր բացատրութիւնները։

Երկար վիճաբանութեան, համարեա, այդ օրվայ ամբողջ ժողովի քննութեան նիւթ է դառնում յանձնաժողովի վերջին նկատողութիւնը, որ վերաբերում է խմբագրական մասնաժողովին։

Այդ նկատողութիւնը հետևեալն է.

«Նկատվում է խմբագրական մասնաժողովի կողմից մի ընդհանուր մշակված զեկավար-ծրագրի բացակայութիւն. մինչև անգամ եղել են դէպքեր, որ պատուէր տուած և տպագրված նիւթը հանել են շուկայից, օր. Մարտ. Յարութիւնեանի կատարած թարգ., Իբսէնի «Ուրուականները»։

Թէ մասնաժողովի, թէ վարչութեան տուած բացատրութիւններից և թէ այդ առիթով ծագած վիճաբանութիւններից պարզվում է հետևեալը, որ խմբագրական մասնաժողովը իբր թէ «կիսաթիւրիմացութեամբ» տպագրութեան է տուել Մ. Յարութիւնեանի թարգմանած «Ուրուականները», և այնքան անաջող է լինում լեզուի կողմից այդ թարգմանութիւնը, որ վարչութիւնը, հարկադրելով նրան անպատաւաբեր՝ Հրատարակչականի նման մի պատկառելի Ընկերութեան համար, ստիպված է լինում չուկայ չը հանել։

Ուրեմն այն դերը, ինչ որ պէտք է կատարէր խմբագրականը, կատարել է վարչութիւնը։

Եւ եթէ, երօք, այդ աշխատութիւնը այդքան անաջող է, վարչութեան վարմունքը միանգամայն գովելի է և ընդհանուր ժողովի կողմից արժանի շնորհակալութեան, այլ ոչ դատափետութեան։

Մաքերի փոխանակութեան ժամանակ իբրև փաստեր յիշվեցին Ա-Դօի, Տ. Յովհաննիսեանի թարգմանութեան, Սուրխաթեանի և այլ աշխատութիւնները ևս, իբրև բնորոշ կէտեր խմբագրական մասնաժողովի գործունէութիւնից։

Խմբագրականի բացատրութիւններից երևաց, որ դրանց վերաբերմամբ պատասխանատուութիւնն ընկնում է վարչութեան վրա և որ ինքը իր պարտքը կատարել է լիովին։

Այդ ժողովում մերկացաւ մի ուշագրաւ պատկեր. դա վարչութեան և խմբագրական մասնաժողովի փոխ-յարաբերութիւնների խնդիրն է։

Վարչութիւնը, որ կոչված է Կ. Հ. Հրատ. Ընկերութեան շահերը պաշտպանելու, իր իրաւունքները տարածելիր է աւելի լայն ըմբռնել, իսկ խմբագրական մասնաժողովը, ընդհակառակը, նրան ուզում է հասարակ գործակատարի կամ նիւթական միջոցներ հայթայթողի դեր յատկացնել։

Դրանից էլ առաջ է եկել խուլ պայքար, և այդ պայքարն է, որ այդ ամբողջ ժողովում փոքր ինչ զսպված պատվում էր երկուերեք փաստերի շուրջը։

Ժողովը, երկար վիճելուց յետոյ, վերջ ի վերջոյ «Ուրուականների» առիթով ընդունեց այն որոշումը, որին բնական կերպով դիմել էր վարչութիւնը։

Իսկ վարչութիւնը որոշել էր շուկայ բաց չը թողնել այդ գիրքը այդ ձևով. եթէ թարգմանիչը համաձայնի արմատական սրբագրութեան վրա իր անունը դնել, այն ժամանակ հրատարակել նորից։ Բայց որովհետև թարգմանիչը չէր համաձայնվել, ուստի որոշել էր կամ այրել, կամ ծախել, կամ, եթէ կա մեկայ թարգմանիչը, տալ նրան իբրև վարձատրութիւն մի պայմանով, որ վերջինս հրատարակութիւնը շուկայ հանի իր սեփական անունով (առանց Հրատարակչ Ընկ. մարկայի)։

Վիճաբանութիւնները այնքան երկար տևեցին, որ շատերը թողին ու հեռացան։

Շարունակութիւնը թողնվեց յաջորդ ժողովին, որ նշանակվեց մայիսի 12-ին։

Մայիսի 12-ի ժողովը, որ տեղի ունեցաւ նոյնպէս Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում երեկոյեան, տևեց մինչև ժամը 12-ը։

Քննութեան առնվեց վարչութեան գործունէութիւնը և ծեծվեցին այն բոլոր խնդիրները, ինչով որ զբաղվել էր նախորդ ժողովը։

Դրան առիթ տուեց Յովհ. Թումանեանի հարցապնդումը։

Ժողովը վերսկսելով չարաբաստիկ «Ուրուականների» հարցից՝ անցաւ նորից Ա-Դօյին, հանդէս բերեց Զիտունիի երկերը, «Հայ Գրողներ» դասագրքի հրատարակութեան խնդիրը, վերջի վերջոյ ձայների մեծամասնութեամբ վաւերացրեց, որ անտեղի էր վերաքննել նախորդ ժողովի որոշումը։

Նշանակվեց էր այդ ժողովը և այն տեսակէտից, որ այդտեղ լիովին մերկացաւ վարչութեան և խմբագրական մարմնի միջև գոյութիւն ունեցող տիրող անտագօնիզմը։

Ժողովը, նկատելով որ վարչութիւնը իր դերը սխալ է ըմբռնում օգուտ քաղելով կանոնագրութեան անորոշութիւնից, փակեց նիստը անվստահութիւն յայտնելով վարչութեանը։

Ընտրութիւնները յետաձգվել են յաջորդ ժողովին։ Աշխատակից

ՎԱՍԻԼԻՑ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՍՕԲՕԼԵՎՍԿԻ

Մայիսի 9-ին Գագրիում վախճանվել է սրտի կաթուածից յայտնի ռուս հրապարակախօս Վ. Մ. Սօբօլեվսկին—«Русск. Вѣд.» լրագրի բազմամեայ աշխատակիցը, խմբագրութեան անդամը և խմբագիրը։

Մօտ 40 տարի Սօբօլեվսկին աշխատել է այդ լրագրի մէջ և ամբողջ 30 տարի եղել է նրա խմբագիրը և, ինչպէս շատ ճիշդ նկատում է «Рус. Вѣд.» թերթը իր դատական յօդուածի մէջ, բոլոր այն ամենը լաւը, որ կայ այդ թերթի մէջ, նա ամենից շատ պարտական է Սօբօլեվսկիին։

«Իր լրագրական գործունէութեան հէնց սկզբից նա ունէր իր առաջ որոշ հասարակական իդէաներ և նա հաւատարիմ մնաց այդ սկզբունքներին մինչև իր կեանքի վերջը։ Հրապարակախօս լաւագոյն մաքով, նա համակված էր խորին յարգանքով դէպի տպագրական խօսքի սրբութիւնը և հաւատով դէպի գրականութեան մեծ հասարակական միսսիան։

«Իբրև խմբագիր նա ձգտում էր մտցնել իր ղեկավարած օրգանի մէջ իր իդէալի լաւագոյն յատկութիւնները և իր հոգու լաւագոյն գծերը—համոզմունքների ամրութիւն, բարոյական մաքրութիւն և խիստ կօրրեկտութիւն անձնական յարաբերութիւնների և հասարակական գործերի մէջ։»

Անտարակոյս, հանդուցեալը յայտնի տեղ պէտք է գրաւէ ռուսաց պարբերական մամուլի պատմութեան մէջ, իբրև առաջադիմական, աղատախոհական և դեմոկրատիկ մաքերի և գաղափարների անվեհեր ախոյան։ Այդ իսկ պատճառով նրա մահը կորուստ է ոչ միայն ռուսաց առաջադէմ մամուլի, այլ և հայ առաջադէմ մամուլի համար, որովհետև հանդուցեալը, ինչպէս մեզ յայտնի է, ոչ միայն իր թերթի մէջ, այլ և առանձնապէս աշխատում էր յօգուտ թիւրքահայերի դատի արդար լուծման այն մարդկանց հետ, որոնք նուիրել էին իրանց այդ դատին։

«Մշակի» խմբագրութիւնը իր անկեղծ ցաւակցութիւնն է յայտնում «Русск. Вѣд.»-ի խմբագրութեան։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԷՆՔԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՅՈՒՄ

Առաջիկայ կիրակի օր, մայիսի 19-ին, դպրոցի նոր շէնքի հիմքն է դրվելու Մեծ-Ղարաբիլիսա գիւղում։

Փամբակի Մեծ-Ղարաբիլիսան այն գիւղերից մէկն է, որ վաղուց զգացել է դպրոցական կրթութեան նշանակութիւնը և առաջիններից մէկը բացել է դպրոց թէ արական և թէ իգական սեռի համար։

Ներկայումս Մեծ-Ղարաբիլիսայում կան թէ ծխական և թէ պետական դպրոցներ։

Ծխական դպրոցները գտնվում են հնացած և կամ վարձված շինութիւնների մէջ։ Նախկին դպրոցական շինութիւններից մէկը հրդեհի զոհ եղաւ երկու տարի առաջ։

Վաղուց դրված էր դարաքիլիսեցիների առաջ դպրոցական մի լաւ շէնքի հիմնարկութեան հարցը։ Եւ ահա այժմ շինարարները յանձնաժողովը կարելի է գտնում արդէն ձեռնամուխ լինել շէնքի հիմնարկութեան։

Շնորհաւորում ենք այդ հիմնարկութիւնը և ցանկանում, որ յանձնաժողովին աջողվի գլուխ բերել իր վրա վերցրած պատկառելի հասարակական պարտաւորութիւնը։

Ա. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ *Երէկ, մայիսի 14-ին, նոյին Մեծութիւններ Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրօվիչի և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Թէոդորօվնայի թագադրութեան օրը զինուորական Ալէքսանդրօ-Նեվսկի տաճարում Վրաստանի էկզարխը մատուցեց պատարագ ուղղափառ հոգևորականութեան մասնակցութեամբ։ Պատարագից յետոյ կատարվեց գոհաբանական մաղթանք, որի ժամանակ Արսէնալի սարից պարզվեց 21 թնդանօթ։ Պատարագին և մաղթանքին ներկայ էին Կովկասի փոխարքայի օգնականներ գէներալ Շատիլովը և սենատոր Վատացին, փոխարքայի խորհրդի անդամները, գէներալիտէտը, բոլոր զօրամասերի հրամանատարները և պատշաճ զինուորական ու քաղաքացիական հիմնարկութիւնների ներկայացուցիչները։ Նոյն օրը գոհաբանական մաղթանքներ կատարվեցին նաև Վանքի աւ. եկեղեցում, կաթոլիկների և լիւթերականների աղօթատներում, հրէաների սինագոգում և մահմեդականների մզկիթում։ Քաղաքը ցերեկով զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառված էր։*

✦ *Բաթումից տեղեկացնում են, որ կոմս Վօրոնցով-Դաշկովի առողջական դրութիւնը դէպի լաւն է գնում զգալի չափով։*

✦ *Մայիսի 12-ին, Թիֆլիսի վրաց ազնուականութեան անդամների ընդհանուր ժողովում չորս հոգուց մի պատգամաւորութիւն է ընտրվել Թագաւոր Կայսրին Մոսկվայի հանդէսների ժամանակ ուղերձ ներկայացնելու համար։*

✦ *«Зак. Рѣчь»-ը հաղորդում է, որ պօլիտեխնիկումի տեղի հարցի ուսումնասիրութեան համար Կովկասի փոխարքան նշանակել է մի յատուկ յանձնաժողով հետևեալ անձերից. փոխարքայի խորհրդի անդամ Մ. Հակիէվ, կովկասեան ուսումն. շրջանի հոգաբարձու Բուդրօվ, Կովկասի բժշկական մասի կառավարիչ Ֆէլինէը, արքունի պալատի կառավարիչ Սմիրնով, նահանգական ազն. պարգևատու Աբխազի, գաւառական պարգևատուներից մէկը, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, Բաքուի քաղաքագլուխ Բիչ և Վլադիկավկազի քաղաքագլուխ Բաեվ։*

✦ *Թիֆլիսի հեռագրատան վարչութիւնը խնդրում է մեզ տալ հետևեալը. «Որպէս զի կարելի լինի հսկել հեռագիրները հասցէատէրերին իր ժամանակին յանձնելու պարտականութիւնների վրա, վարչութիւնը խնդրում է հեռագիր ստացողներին՝ ստացագրերի վրա բացի ստորագրութիւնից դնել նաև ազգանունը»։*

✦ *Կովկասի փոխարքան տիկին Մ. Փիթօյանց-Բէլեցկայային պարգևել է ոսկէ մէդալ՝ Կովկասում ռուսական դրամայի զարգացմանը նպաստելու համար։*

✦ *Ալէքսանդրօպոլում կենդանիների ցուցահանդէս կազմակերպելու համար Կովկաս. Գիւղատնտ. Ընկերութիւնը որոշել է խնդրել կովկասեան զեմստվոյին միջոցներից 1500 ռուբլի։*

✦ *Այսօր, Կայսերական Ռուսական Աշխարհագրական Ընկերութեան կովկասեան բաժանմունքի տարեկան ժողովն է երեկ. ժ. 8-ին Կովկասի փոխարքայի գիւանատան շէնքում։ Կը զեկուցվի 1912 թ. գործունէութեան մասին, որից յետոյ դասախօսութիւն կը կարդայ Դ. Սօսնօվսկին՝ Կովկասը բուսաբանական-աշխարհագրական շրջանների բաժանելու մասին։*

✦ *Ինչպէս լսում ենք, առաջիկայ կիրակի Հայ Գրողների Ընկերութիւնը կրկնելու է Սայաթ-Նովայի յիշատակին կազմակերպված երեկոյթը։*

✦ *Յունիսի 1-ից III քաղաքամասի ոստիկանութիւնը փոխադրվում է Վելեմինովսկայա փողոցից Բէհրութեան փողոցը, իսկ այժմ գրաւող շէնութիւնը կցվելու է Թիֆլիսի ոստիկանապետի գիւանատանը՝ վերջինս ընդարձակելու համար։*

✦ *Թիֆլիսի ոստիկանապետի կարգադրութեամբ բոլոր մնատէրերը այս յունիսի 1-ից ունենալու են պարտաւորապէս սանիտարական տեսարաններ։*

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մայիսի 13-ին, առաւօտեան ժ. 3½-ին, Օլգինեան փողոցի վրա տարձանակի 4 հարուածով սպանվեց Գօգնիեվի տան դռնապան Դաւիթ Միւելշվիլին, 31 տարեկան։ Զարագործը, զինված «Մաուզէր» տարձանակով, դռնապանին սպանելուց յետոյ ուղղվում է դէպի Զեմիռի դեղատունը և մտնում Կօրգանօվակայա փողոցն ու սկսում փախչել։ Հետապնդող ոստիկանը 4 անգամ տարձանակ է պարպում չարագործի վրա, իսկ վերջինս էլ իր կողմից՝ ոստիկանի վրա, սակայն երկուսն էլ առանց հետևանքի։ Իսկոյն դէպքի տեղն են գալիս I քաղաքամասի պրիստաւը, ոստիկանները, քիչ ժամանակից յետոյ՝ ոստիկանապետ Զասխալկինը 50 կօզակներով և ձիաւոր ոստիկաններով, որոնք մի քանի մասերի բաժանվելով՝ սկսում են հետապնդել չարագործին։ Վերջինս շարունակ տարձանակ պարպելով փախչում է մինչև Վերայի այգիները և

Խալատովի այգու մօտ շրջապատվելով հետապնդողներից՝ սպանվում է տեղն ու տեղը։ Սպանվածի մօտ գտնվեց «Մաուզէր» սիստեմի մի տարճանակ առանց փամփուշտների, փամփուշտակալ՝ լիքը փամփուշտներով և մի հատ բէքուար-դանակ։ Ինչպէս պարզվեց, չարագործը աւազակ Սանդրօ Մամուչաշվիլին է, որը տաժանակիր աշխատանքների վայրից փախչելով՝ եկել էր Կովկաս և միացել Դուշէթի գաւառում գործող աւազակային մի խմբի։ Ցիշեալ խումբը Դիղօմի գիւղում 2—3 տարի սրանից առաջ ենթարկվելով տեղական պահակային խմբի հետապնդման և հրացանաձգութեան ժամանակ կորցնելով իր պարագլխին՝ Սէնօ Մամուչաշվիլիին, որոշում է կայացնում պահակներից մէկին՝ Դաւիթ Միչելաշվիլին, որը վերջերս վարում էր գռնապանի պաշտօն, ենթարկել մահվան պատժի, նրան վերագրելով տեղական իշխանութեանը խումբի ուր գտնվելու մասին տեղեկութիւններ տալը։ Եւ այդպէս, աւազակ Սանդրօ Մամուչաշվիլին գալիս է Թիֆլիս և և կատարածում խմբի կարգադրութիւնը։

ԼՈՒՐԵՐ ՍՂՆԱԽԻՑ

Սղնախ, 1 մայիսի

◆ Հանգուցեալ Նիկողայոս Ղօրղանեանի այրին իրագործեց իր հանգուցեալ ամուսնու կտակը, յատկացնելով 3000 ր. հայոց դպրոցի շինութեան համար ս. Կարապետ մայր եկեղեցու գաւթում։ Հին դպրոցական շինութիւնը արդէն սկսել են քանդել և նրա տեղը կը կառուցվի նոր շինութիւն 6 սենեակով։ Հայոց դպրոցի միւս սեփական շինութիւնը, որտեղ տեղաւորված է հայոց դպրոցը ներկայումս, ցանկանում են տալ վարձով Մարիինսկի օրիորդաց դպրոցին տարեկան 900 ր.։ Եթէ իրագործվի այս, հայոց դպրոցի միջոցները կը շատանան և հնարաւորութիւն կը լինի ընդունել մեծ քանակութեամբ մանուկներ, աւելացնելով և ուսուցիչների թիւը։

◆ Զայնաւորների ընտրութիւնների նախօրեակումն ենք գտնվում։ Մղվում է ահագնագոյն ագիտացիա։ Հարցն ընդունել է ազգայնական կերպարանք։ Հայերը ցանկանում են վերընտրել քաղաքային աւագ Վ. Ենիկոլոփեանին, իսկ վրացիք ուզում են վրացի քաղաքագլուխ ընտրել։

◆ Սպիտակ Ծաղկի օրը Սղնախում հաւաքվեց մօտ 350 ր., Ցարսկիէ-Կօլօդցիում՝ 175 ռուբլի։

◆ Շիրակ անապատում այս տարի սպասվում է հացի առատ բերք, աւելի շատ անցեալ տարուց։ Պաղատու ծառերը նոյնպէս լաւ են։

◆ Քաղաքի բերդում, գերեզմանատան մօտ, աշակերտներն ու աշակերտուհիները անկեցին ծառեր։ Սրանից 12 տարի առաջ մի քանի երիտասարդներ Թէլաւի խճուղու երկու կողմը տնկեցին ծառեր, բայց դրանցից մէկը չը մնաց։ Հաւանական է, նոյնը կը պատահի և նոր տնկված ծառերին։

◆ Սղնախի գործակալի դէմ տիրում է խորին դժգոհութիւն, սակայն նա մնում է դարձեալ պաշտօնում։ Լուր կար, որ գործակալին հրաժարեցնում են, բայց մինչև օրս չը ճշդվեց։ N. N.

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԵԱՊՕՆԱԿԱՆ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ ԹԻՖԼԻՍԻ ԲԵՄԻ ՎՐԱ

II

Մենք տեսանք եապօնական դերասանուհի Գանակօ Օսային երեք պիէսի մէջ՝ 1) «Ինքնասպանութիւն», 2) «Թէյատանը» և 3) «Աղախին Օտակէ»։

Գանակօն, անկասկած, շնորհալի դերասանուհի է։ Նա բեհեռում է իր վրա հանդիսականի ուշադրութիւնը և ստեղծում է ուրոյն տրամադրութիւն բեմի վրա։ Նա յարմարեցնում է իր խօսելու ձևը և շարժումները ներկայացված տիպին։ Առաջին պիէսի մէջ նա խօսում է կուլտուրական ընտրելեղուով, իսկ վերջին պիէսում գռեհկական, բանուորական լեզուով։ Դերասանուհին աջող տանում է լուռ տեսարանները և հետաքրքրում իր խաղով։ Նա ունի թեթև, ճարպիկ շարժումներ և գիտէ պարել։ Նա նուագում է մի-երկու երաժշտական գործիքի վրա և մեղմ ձայնով երգում է։ Առհասարակ Գօնակօի ձայնը բարեհնչիւն է։ Ինքը դերասանուհին փոքրահասակ է։

Հասարակութիւնը ընդհանրապէս գոհ մնաց Գօնակօի խաղից և հետաքրքրվեց եապօնական կեանքից վերցված պատկերներով։ Միւս դերակատարները երկրորդական դերեր էին կատարում և նպաստում էին անսամբլին։

Պիէսները առանձին հետաքրքրութիւն չէին ներկայացնում իրանց բովանդակութեամբ։

Առաջին պիէսը ունի դրամատիկական տարր և բաղկացած է 2 պատկերից, միւսները մի-մի գործողութեամբ են։

«Ինքնասպանութիւն» պիէսի մէջ դերասանուհին կատարում էր պալատական մի պաշտօնէուհու (Օկիկու) դեր, որը առիթ է տալիս դերասանուհուն ողբերգական մի տպաւորիչ տեսարան ներկայացնելու։ Պաշտօնէուհին, թէև սրբութեամբ կատարել է իրան տուած յանձնարարութիւնը, բայց զոհ է գնացել ստոր և նենգ խորիգայի։ Նրա բերած թանգագին սկուտեղներից մէկը գողացել են նրան անուանարկելու նպատակով։ Գանակօն գեղեցիկ կերպով արտայայտեց խորագոյն վշտի ու յուսահատութեան յուզալից զգացմունքներ և անհունթեան յուզալից զգացմունքներ և անհունթախտի թելադրանքների տակ բարձրացրեց իր վրա սուրը և ինքնասպանութիւն գործեց եապօնական «խարակիրի» եղանակով։

Վերջին պիէսը պարունակում է իր մէջ զաւեշտական տարրեր և ծիծաղեցնում է հանդիսականներին։ Եւ Գանակօն, որ առաջին պիէսի մէջ հանդիսանում է ողբերգական դերով, անհուն վշտի արտայայտութեամբ, վերջին պիէսում («Օտակէ աղախինը») զուարճացնում է իր անհոգ ծիծաղով և կատակով։

Իւրաքանչիւր գործողութեան սկզբում ռուս դերասան Շեստովը, որը ուղեկցում է եապօնական խմբին, անում էր մի ամփոփ բանախօսութիւն և ծանօթացնում հանդիսականներին պիէսների բովանդակութեան հետ։

Շեստովի ասածներից հասարակութիւնը տեղեկացաւ առաջինը՝ թէ եապօնական թատրօնական գործը ունի իր յատուկ կազմակերպութիւնը և դերասանները պատրաստվում են երկարամեայ վարժութեամբ, սկսելով նախ պարելուց, յետոյ անցնելով մի մէկային, ապա դերակատարութեան. երկրորդ՝ թէ հին եապօնական ներկայացումները սկսվում էին ցերեկով և շարունակվում մինչև խոր երեկոյ. երրորդ՝ թէ հին կլասիքական բեսերատուարից յայտնի են 60 պիէս, որոնք և կազմում են եապօնական ազգային բեսերատուարը. չորրորդ՝ թէ վերջին տարիներում մուք է գործում եւրոպական թատրոնը եապօներին թարգմանութեամբ, և այլն։

Եապօնական բեմը շատ պարզ է. նա չունի բարդութիւններ, սենեակները ազատ են աթոռներից։ Եապօնցիները չոքում են յատակի վրա, որի վրա գցված է կապերտ կամ մի որ և է ծածկոյթ։

Զգեստները ընորոշ են, յայտնի դարձած մեր հասարակութեանը վերջին տասնեակ տարիներում։

Հասարակութիւնը վարձատրեց դերասանական խումբը ծափահարութիւններով, մանաւանդ դերասանուհի Գանակօին, որին նաև մատուցվեց ծաղկեփունջ։

Երկրորդ եապօնական երեկոյթը կը տրվի կիրակի օր, մայիսի 19-ին, Թիֆլիսի Արտիստական թատրոնում։ Իսկ մինչև այդ խումբը կը տայ ներկայացումներ Քութայիսում և Բաթումում։ Սիրող

ՑՈՎՀԱՆՆԵՍ ՍԵԹԵԱՆԻ ՑՕԲԵԼԵԱՆԸ

Թիւրքահայ մտաւորական դասը որոշել էր դեռ այս տարի յունվարին տօնել հայ բանաստեղծ և ուսուցիչ՝ Ցովհաննէս Սեթեանի 40-ամեայ գրական-դաստիարակչական գործունէութեան յոբելեանը, բայց ապա յետաձգել էր մի քանի պատճառներով։

Երէկ, մայիսի 14/27-ին, ստացանք Կահիրէից յոբելեանական յանձնախմբի գրութիւնը, որից երևում է, որ յոբելեանի կատարումը նշանակված է Կահիրէում, ամսիս 12/25-ին, Պրէսնթանիա թատրոնի մէջ։

Հետևաբար ռուսահայերս, ստանալով յոբելեանի տօնախմբութեան մասին լուր, երբ արդէն նա տօնված է, անկարող էինք փութացնել հեռագրով կամ նամակով մեր համակրութեան և գնահատութեան վկայութիւնները, ուստի և ստիպված ենք դէթ յոբելեանից յետոյ «Մշակի» մէջ արտայայտել մեր շնորհաւորութիւնները և բարեմաղթութիւնները։

Ցովհաննէս Սեթեան, իբրև բանաստեղծ, ևս առաւել իբրև մանկավարժ-ուսուցիչ, քիչ ծանօթ է ռուսահայերին, ինչպէս առհասարակ՝ թիւրքահայ գործիչներից և գրողներից շատերը։ Եգիպտոսի մէջ կազմվել է մի յանձնախումբ, բաղկացած այնպիսի ականաւոր գործիչներից, ինչպէս Ե. Աղաթոն-բէյ, Մ. Անդրանիկեան, պրոֆ. Ց. Գայաեան, Լևոն Մկրտչեան, Կարապետ-բէյ Շերիմանեան, Կարօ Պալեան, Մինրան Տամատեան, Մինաս Պալեան, Միքայէլ Կիւրճեան, Սեդրաք Դաւիթեան, Վահան Մալէզեան և Տիգրան Կամարական։ Այդ յանձնախումբը գրում է թէ՝

Սեթեան մեր գրական աշխարհին մէջ գուրգուրալի դէմք մը եղած է, իր շուրջ ստեղծելով միշտ յարգանքի անուշ մթնոլորտ մը՝ որուն ինքն եղած է յաճախ խնկարարը բուրվառը, իսկ իբրև ուսուցիչ՝ անթիկա զարգացած սերունդներ ձգած է իր ետին, որոնց իր փափուկ զգացումներէն միշտ բան մը տուած է և որ այսօր երախտագիտութեամբ կը կարկառին դէպի իր մաքուր և ազնուական հոգին, որ կրցած է ժամանակին աւերներէն անաղարտ և կեանքի պայքարին կիրքերէն զերծիկեր մնալ։

Թիւրքահայ մտաւորականների վկայութեամբ, Ց. Սեթեանի 40-ամեայ (1872—1912) գործունէութիւնը եղել է բեղմնաւոր և արժանի ամենայն յարգանքի։

Ցանուն ռուսահայ մտաւորական դասի ներկայացնելով անկեղծ համակրութիւն և բարեմաղթութիւններ պատկանելի յոբելեարին, որ այսօր անցնում է գնահատումն իր աշխատութիւնների և ջանքերի յօգուտ բազմաթիւ հայ սերունդների, ցաւ ենք յայտնում միևնոյն ժամանակ, որ ռուսահայ գրական և մտաւոր շրջանները անկարող են եղել, պարզապէս անտեղեկութեան պատճառով, մասնակցել մի համակրելի բանաստեղծի և բեղմնաւոր ուսուցչի յոբելեանին։ Հ. Ա.

ՄԱՄՈՒԼ

Դօքտօր Պաղիլ-խանը քննադատութեան ենթարկելով «Բիւզանդիոն» մէջ Շանթի «Հին-Աստուածներ» երկը՝ գալիս է շատ աննպաստ եզրակացութիւնների և գտնում է, որ «Հին-Աստուածները» կրնար աւելի իրաւունքով խենթերու ապաստանարան կոչուիլ, կատարեալ խենթանոց մը, ուր ցաւագար մարդկութիւնը պատերու մէջ գէշ երազներով ու ցնորքներով կը տառապի»։

Յօդուածագիրը գտնում է, որ՝

«1) Ոճը կտրուկ է ու կուռ, բայց լեզուն ոչ ռամկական է, ոչ գեհենիկ, ոչ ալ ռուսահայերէն և Շանթ չարաչար կը մեղանչէ թէ թիւրքահայերէնի և թէ ռուսահայերէնի դէմ. 2) իբրև դրամա, նա քննադատութիւն չի կրնար դիմանալ. դրամն պէտք է նկարագրէ գործերու միջոցով խոր գիծերով մարդկային էակներու տիպեր. ծանօթ դրամներու յայտնի դէմքերը մարդկութեան աւելի մօտ են, քան թէ անոնք մեզի համակրելի են կամ բուռն կերպով ատելի։ Իսկ Շանթի մէջ ցաւագար ստուերներու հետ գործ ունինք։

Շանթի նպատակն է,—ասում է դօքտօր Պաղիլը,—պատկերացնել վանական կեանքին անառողջ ու անբնական կազմակերպութիւնը, ցոյց տալ թէ բնութեան ոյժերն անջնջելի են ու անոնց ձայնը լսելի պիտի ըլլայ ուշ կամ կանուխ։ Պիէսն անընդհատ մաքառում կը ներկայացնէ աշխարհի (բնութեան) ոյժերուն ու վանական օրէնքներուն մէջ, ուր անօգուտ ճնշումներէն վերջ բնութիւնն է, որ իր վրէժը կը հանէ թէ վանահայրէն և թէ աբեղայէն։ Եթէ Շանթին նպատակն այն էր, որ մենք մատնանիշ ըրինք, պիտի խոստովանինք թէ, գործին մէջ թերութիւններով հանդերձ, հեղինակը լիովին հասեր է իր կէտ նպատակին։ «Հին Աստուածները» ցնցեց ու պիտի շարունակէ ցնցել բոլոր այն տեղերը, ուր անապատները տակաւին գոյութիւն ունին։ Մենք չպիտի զարմանանք, եթէ հայ ժողովուրդը գործնական եզրակացութեան յանգի ու Շանթի նկարագրած վայրերուն վատառողջ մթնոլորտը մխանգամ ընդմիշտ ապաստեխէ։ Գերավաճառութեան դրութիւնը իր մահաբեր հարուածը ստացաւ Uncle Tom (Աղքար Թօմաս) անուանով վէպէ մը, զոր մաքրակենցաղ կին մը գրեց։ Մեր մէջ վանականութիւնն արդէն հոգեվարքը վիճակի մէջ էր. փոխան իր ներսիդին արմատացած էր, սակայն անոր վերջին հարուածը Շանթին «Հին Աստուածներէն» կը հասնի։

Վանականութեան ադէտները շօշափելի ընելու համար՝ Շանթ շարք մը պատկերներ կը ներկայացնէ, որոնք կրնան հերելի ըլլալ զուտ բանաստեղծութեան մէջ, սակայն իրենց ներկայ ձևով անտեղի են դրամ ըլլալու յաւակնող գործի մը մէջ։ Մենք արդէն ներկայացուցինք այն ցնորքներուն շարքը, որոնք կարևոր դերեր կը խաղան հոն, ուր իրաւունք ունէինք իրական մարմնով ու ոսկորով մարդեր պահանջելու։ Բացի այս ցնորքական բանակէն, մենք կը գտնենք դրամին մէջ շարք մը մարդկային էակներու անուններ, զորս մենք երկու դասերու պիտի բաժնենք. առաջին՝ խենթեր և երկրորդ՝ ոչ-խենթեր։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Веч. Вр.» ամենաարժանահաւատ աղբիւրից տեղեկացնում է, որ արտաքին գործերի մինիստր Սազօնովը իր մինիստրութեան նախահաշիվ քննութեան ժամանակ հանդէս է գալու Պետական Դումայում երկար բացատրութիւններ տալու Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան մասին։ Մինիստրի հանդէս գալը սպասվում է մայիսի վերջին։

◆ Մայրաքաղաքի բոլոր օրաթերթերը համակրական յօդուածներ են տպում «Рус. Вѣд.»-ի հանգուցեալ խմբագիր Սօբոլեվսկիի յիշատակին։

◆ Պետերբուրգից Կոստրօմա ուղարկվեցին առաջիկայ հանդէսների համար 8 պրիստաւ, 15 պրիստաւի օգնական, 42 թաղական վերահսկիչ և 400 քաղաքապահ ոստիկան։

◆ Յայտնի Բէկուան հրաւիրվեց Մոսկվայի Գեղարուեստական թատրոնի վերատեսչի պաշտօնով։

◆ «Р. Молва»-ի ասելով՝ բուսինական թագուհի Կարմէն Սիլվան կուրացել է։

◆ Սիրիայում անկարգութիւնները շարունակվում են։ Սպանված վալիի փոխարէն նշանակված է նախկին մեծ վեզիր Քեամիլ-փաշան։

◆ Բ. Դուռը լիազօրութիւն տուեց Պետերբուրգի իր դեսպան Թուրխան-փաշային բանակցութիւն սկսել Ռուսաստանի հետ՝ այն 300 կիլոմետր տարածութեան մասին, որ Ռուսաստանը պահանջում է զիջել պարսկական սահմանագլխում։

◆ Տեղեկացնում են, որ Էսադ-փաշան, չը սպասելով Լոնդոնի դեսպանների ժողովի վճռին, ակտիվ քայլեր է անում Ալբանիայում, յենվելով տեղական ուղղափառ և մահմեդական ազգաբնակութեան վրա։ Ներկայումս Ալբանիայում ուղղափառ ալբանների թիւը հաւասարվում է 400,000-ի. կաթոլիկ-մահմեդականները կիսով չափ են։

◆ Այսօրվանից Բոլգարիայում գործածութիւնից հանվում են սերբական դրամները։

◆ Հաղորդում են բուսին-աւստրիական զինուորական ընդհարման մասին։

◆ Հաստատ տեղեկութիւններ կան, որ Աւստրիան պատրաստվում է գրաւել Նովօբազարի-Սանջակը, իսկ Իտալիան՝ Վալլօնը։

◆ Ժընէվից հեռագրում են, որ սոցիալիստական մամուլը պահանջում է արտաքսել Շվեյցարիայից պօրտուգալական էկս-թագաւոր Մանուէլին, որ նոր դաւադրութիւն է պատրաստում պօրտուգալական հանրապետութեան դէմ։

◆ Պարիզում նորից գլուխ է բարձրացրել աւազակային-դրամաշորթական գործունէութիւնը կազմակերպված մարմնի ձեռքով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

13 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վերադարձաւ ճան. հաղ. մինիստրը։

Ամերիկական պատգամաւորութիւնը ընդունեց մինիստրների խորհրդի նախագահը և երկրագործութեան գլխաւոր կառավարիչը։ Երկու նիստում պատգամաւորները ծանօթացան ռուսական գիւղատնտեսական ու ֆինանսական-տնտեսական դրութեան հետ։ Երեկոյեան պատգամաւորներից 4-ը մեկնեցին Մոսկվա, մնացածները՝ կիէվ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թուի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արաց գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Ալստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եալախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բաքու 11 ժ. 13 ր. զիշ.։ **Պօստաստար գնացքը** № 4—10 ժ. 16 ր. զիշ., հասնում է Ալստաֆա 1 ժ. 6 ր. զիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եալախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բաքու 3 ժ. 31 ր. ցերեկ։ **Մարդասար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Ալստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. զիշ., Եալախ 1 ժ. 1 ր. առ. Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բաքու 7 ժ. 53 ր. առ., **խառն գնացքը** № 106 (Մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Ալստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցերեկ., Եալախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. զիշ., Բաքու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Պօստաստար գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. զիշ.։ **Մարդասար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվո 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդասար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. զիշ., հասնում է Միխայլօվո 2 ժ. 31 ր. զիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **խառն գնացքը** № 107 (մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. զիշ., հասնում է Միխայլօվո 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. զիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստաստար գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 48 ր. զիշ., Էջմիածին 5 ժ. 12ր. զիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. զիշ. (առանց երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. զիշ., Ալէքսանդրօպոլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդասար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. զիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՕՐԺՕՄԻ.—**Մարդասար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Բօրժոմ 10 ժ. 41 ր. առ., Բօրժոմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդասար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Բօրժոմ 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժոմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արաց գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստաստար գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդասար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. զիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստաստար գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդասար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդասար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. զիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստաստար գնացքը** № 4Ա/3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—**Մարդասար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդասար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաթուի հիւանդութիւնների։ Էլեքտրաբուժութիւն։

Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.

Ծօլոչակ, Բէքուտովսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչ փողոցի)։ Տէլէֆօն № 1175.

(չ. կ.) 377 100—94

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սա տարօրինակ է թուում, սակայն ճշմարտութիւն է։

Միանգամայն ձրի ղեղատոմս։

Էլեքտրաքարշում նստած երկու բանուորի խօսակցութիւնը.

— Զօլիօվը նորից աշխատանքի է։

— Անկարելի է։ Անցեալ կիրակի ես նրա մօտ էի. նրա տանջանքները սարսափելի էին։ Բժիշկն ասում է, որ նրա հիւանդութիւնը իշխում է կամ թէ դրա նման մի բան, այն էլ շատ սուր ընաւորութեան, և որ նա կարող է ամիսներով անկողնում ընկած մնալ։

— Նշանակում է, բժիշկը սխալվել է, որովհետև ես տեսայ Զօլիօվին, երբ նա վերադառնում էր աշխատանքից, և նա ասում էր, որ երբէք իրան այնքան լաւ չէ զգացել, որքան այժմ։

— Ինչ է արել նա։

— Նա ինձ ասաց, որ մի ձրի դեղատոմսով է բժշկվել, որը կարել է լրագրի հրից մէկից։ Իմ տանտիրուհին որսվհետև յօդացաւով բռնված է, ուստի ես խնդրեցի նրանից այդ դեղատոմսը։ Ահա նա. «Գնացէք մօտակայ դեղատներից կամ դեղավաճառանոցներից մէկը և տուէք 60 գրան Կէֆալոզ-Սոոր 12 տարբէակներում։ Երկու տարբէական ընդունէք միանգամից անօթի, իսկ այնուհետև իւրաքանչիւր ժամը մի անգամ մի-մի տարբէական, մինչև որ ցաւերը կանցնեն։ Նա ասում էր, որ այդ է նրան բժշկել, և եթէ, իմ տանտիրուհուն այդ չօգնէ, խոստանում է չարաթի երեկոյեան մի հիւրասիրութիւն տարքել։ (Π. 68252—№ 8)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Լօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկան խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։

Բ. Դ. ԱԼԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։

Գ. Մ. ՀԻԳՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։

Ն. Ֆ. ՄՈՒՐԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մաշտ, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։

Ա. Գ. ԳԱՐԱԳԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխա ղ հիւ. և ծաղկահան.։

ԳԻՆ-ԲԺԻՇԿ ՅԻՐ.-ԳԱՐԵԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵՆՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

ԳԻՆ ԲԺՇԿ Օ. Վ. ԴԷՆԶԱՍԱՑԱ-ԷՆԳԷԼ—6—7 ժ մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։

Վճարը 50 կ.։ Հրատարակուած ձրի։ Համապատասխանի (կօնսուլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեանց

1. 0—51

ԹԵՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱՅԻ

հայոց եկեղեցու համար ՀԱՐԿԱՒՈՐ է

ՄԻ ՀԱՄՈՒՏ ՏԻՐԱՑՈՒ

Բնակարան, ռոճիկ՝ 15 ր., արդիւնքով մինչև մնում՝ 30 ռուբ.։ Ցանկացողները թող շտապեն դիմել՝ Темиръ-Ханъ-Шура, ктитору Сафарянцу.

(ա. օ.) 384. 4-1

Լոյս տեսաւ պատկերազարդ



«ԹՐՈՒՇԱԿԻ» մէջ մտնում են՝ Հայրիկ, Բիսմարկ, Գուլկին, Պարսնան, Պլեւ-Գուլղ, Մօլլա Նասրէդդին և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ։ **200**-ի չափ **բնեիր** տեսիլարանները, **128** երես։ Գինն է **30** կոպէկ։

Պահեստը մեզ մօտ. մեկնելիս գումարով գնողներին մեծ զեղչ՝ նայած պահանջի քանակին։ Դիմել մեր մշտական հասցէով՝ Тифлисъ, Лысогорскій переулокъ, № 6. Хачатуру Хачатуряну.

Դիմել նաև գրավաճառներին։

(չ. կ.) 329. 20—6

600 ԱՌԱՐԿԱՆԵՐ

Փոխանակ 25 ռուբլու **2 ՌՈՒԲԼԻ 90 կոպ.**

Մեր ֆիրմայի հետ ծանօթանալու համար մենք ուզում ենք միայն այս լրագրի ընթերցողներին 600 հատ օգտակար և արժէք. առարկ., որոնցից գլխաւորն է՝ գրպ. անվիժամաց. 10 տ. երաշխիքով, ոսկէ գուրլէ-շղթայ, տարբեր և կան. ոսկէ գուրլէ-ատամնիներ ամերիկ. ազամանդներ, նոյն յատկութ. ապարանջան, մանեակ և սկանջօղներ (200 ր. արժէք ունեցողից չը պակասավող), կաշվեհեղ. պլորտմանէ, նէսէսէր և 500-ից աւելի հետաքրքիր օգտ. առարկ.։ Բոլոր 600 առարկ. համար վերցնում են միայն **2 ր. 90 կ.** (ժամաց. առանձին արժէք 6 ր.)։ Վերադիր վճ. ուղարկ. համար ճանապարհածախք հաշվում է՝ 1—3 գաղն. համար 55 կ., Սիբիր՝ 95 կ.։ Ապրանքը վատանած դէպքում յետ ենք վերցնում և փողը վերադարձնում։ Ο-во „МЕРКУРІЙ“, ЛОДЗЬ. К. 20.

Թղթակցել ռուսերէն լեզուով։

(չ.) (Л. 8040) 6—3

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ձեռնարկում է հրատարակելու

Նիւթեր հայ մելիքութիւնների մասին

Ընդհանուր խորագրով ժողովածուներ, որոնցից առաջինը լինելու է Գարիչ վանքի Առաքել վարդապետի

ԴԻՒԶԱԿՆ ՄԵԼԻՔՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ։

Խնդրվում է ուղարկել ընկերութեան հայ մելիքութիւնների վերաբերեալ ձեռագիրներ, յիշատակարաններ, վաւերաթղթեր (իսկական կամ պատճէն), արձանագրութիւններ, տապանագրքեր, աւանդութիւններ և այլն հրատարակելու։

Նաև հայ մելիքութիւնների վերաբերեալ իրեր, զէնքեր, զգեստ, զարդ և այլն ընկերութեան թանգարանում պահելու։

Նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան
Անդամ-քարտ.՝ Ե. Լալայեան

(չ.) 361. 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный